

Աղասի Թադևոսյան  
Երևանի պետական համալսարան

Aghasi Tadevosyan Public Policy Research  
Yerevan State University,

ԱՂՔԱՏ ԵՎ ԱՆԱՊԱՀՈՎ ԽԱՎԵՐԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԵՏՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ  
ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
(Հանրային քաղաքականության հետազոտություն)

**POLICIES DIRECTED TO THE IMPROVEMENT OF POST-  
CRISES SITUATION OF POOR AND SOCIALLY  
VULNERABLE SECTORS' HUMAN DEVELOPMENT IN  
ARMENIA**

(Public Policy Research)

ԵՐԵՎԱՆ 2011

YEREVAN 2011

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**1. Ճգնաժամի սոցիալ տնտեսական հետևանքները և դրանց ազդեցությունը աղքատ ու անապահով խավերի կրթական և առողջապահական կարիքների վրա**

1.1. Ճգնաժամի սոցիալական հետևանքների ընդհանուր բնութագիրը

1.2. Ճգնաժամի սոցիալական հետևանքների ազդեցությունը աղքատ ու անապահով խավերի վրա

1.3. Աղքատ ու անապահով խավերի կրթական կարիքների նկարագիրը և դրանց պատճառները

1.4. Աղքատ ու անապահով խավերի առողջապահական կարիքների նկարագիրը և դրանց պատճառները

**2. Ճգնաժամի հետևանքների ազդեցությունը աղքատ ու անապահով խավերի մարդկային զարգացման վրա**

2.1. Մարդկային զարգացման կոնցեպցիան և դրա կարևորությունը աղքատ ու անապահով խավերի համար

2.2. Կրթական կարիքների նկարագիրը մարդկային զարգացման տեսանկյունից

2.3. Առողջապահական կարիքների նկարագիրը մարդկային զարգացման տեսանկյունից

2.4. Մարդկային զարգացման և մշակութային կապիտալի ձևավորման հիմնախնդիրները աղքատ ու անապահով խավերի միջավայրում

**3. Աղքատ ու անապահով խավերի մարդկային զարգացման վրա ճգնաժամի առաջացրած հետևանքների ու հիմնախնդիրների հաղթահարման հնարավոր ուղիները**

3.1. Նվազագույն կենսապահովման համար անհրաժեշտ հակաճգնաժամային քաղաքականությունը առաջացած հիմնախնդիրների համատեքստում

3.2. Կրթական ոլորտի հակաճգնաժամային քաղաքականությունը առաջացած հիմնախնդիրների համատեքստում

3.3. Առողջապահական ոլորտի հակաճգնաժամային քաղաքականությունը առաջացած հիմնախնդիրների համատեքստում

## **Ներածություն**

2008 թ. վերջին Համաշխարհային ֆինասատնտեսական ճգնաժամը շատ ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի վրա: Փրոճագիտական տարբեր կարծիքների համաձայն ճգնաժամն առավել զգալի պետք է անդրադառնար Հայաստանի վրա հատկապես 2011-2012 թթ. և այդ ազդեցությունը կարող է շարունակվել մինչև 2015 թ.: Կարելի է ասել, թե անգն աչքով էլ տեսանելի է, որ ճգնաժամը առավել ծանր են տանում հասարակության աղքատ ու անապահով խավերը: Առաջնային անհրաժեշտության կարիքների բավարարման ոլորտում առաջացած հիմնախնդիրներին զուգահեռ խորացել են նաև առողջապահական, կրթական պահանջմունքների բավարարման հետ կապված բարդությունները: Հիմնախնդիրների խորությունն այնպիսին է, որ ոչ միայն պարզապես տեղի է ունեցել կարիքների բավարարման կարողությունների անկում, այլ այդ անկումը վտանգում է աղքատ ու անապահով խավերի մարդկային զարգացումը:

Վիճակն ավելի է բարդացել այն առումով, որ փաստացորեն դադարեցվել է նաև 2007 թ. Կայուն զարգացման ծրագիր՝ ԿԶԾ վերանվանված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի՝ ԱՀՌԾ-2 ի իրագործումը: Սա նկատելիորեն է ազդել երկրի սոցիալտնտեսական ցուցանիշների վրա: Աղքատ ու անապահով խավերի մարդկային զարգացման ցուցանիշների զգալի անկումը վտանգավոր է ոչ միայն այդ խավերի ներկայումս գոյատևելու հիմնախնդրի տեսանկյունից, այլ, ընդհանրապես, նրա ողջ կյանքի ընթացքում առողջ ու իրացված լինելու հեռանկարի առումով:

Ահա նման լարված իրավիճակի ձևավորման հետևանքում, խնդիր է առաջացել հետազոտական ծրագրերի միջոցով նպաստել ՀՀ կառավարությանը աղքատ ու սոցիալապես անապահով խավերի մարդկային զարգացման կարիքներին ուղղված ծրագրերի մշակմանը, քանի որ իրագործվող ծրագրերը լիովին արդյունավետ դժվար է համարել՝ իրավիճակի վատ ուսումնասիրվածության պատճառով:

Ներկայացվող հետազոտության նպատակն է եղել իրականացնել աղքատ ու անապահով խավերի մարդկային զարգացման կարիքների ուսումնասիրություն և ներկայացնել առաջարկներ այդ կարիքների հաղթահարմանն ուղղված, ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ու ռազմավարական քաղաքականությունների ու ծրագրերի մշակմանը նպաստելու համար:

Հետազոտության խնդիրներից է նաև ներկայացված առաջարկներով նպաստել ԿԶԾ վերանայման գործընթացին՝ ինչպես ոլորտային ծրագրերի, այնպես էլ ռազմավարական նպատակադրումների առումներով:

Հետազոտության իրականացման համար ընտրվել էին որակական հարցման՝ ֆոկուս խմբային և փորձագիտական մեթոդները: Ֆոկուս խմբային հարցումները իրականացվել են 3 մարզերի՝ Շիրակի, Լոռու, Սյունիքի ու Երևան քաղաքի սոցիալապես անապահով խավերի ներկայացուցիչների հետ: Հարցման այս մեթոդի միջոցով տվյալներ են գրանցվել աղքատների ու անապահովների կարիքների վերաբերյալ: Իսկ փորձագիտական հարցումների միջոցով նաև այդ կարիքներին ուղղված ծրագրերի ու միջոցառումների վերաբերյալ:

Ֆոկուս խմբերին մասնակցել են ոչ միայն սոցիալական նպաստառուների ցանկերում ընդգրկվածները, այլ նաև դրանցից դուրս մնացած, սակայն խիստ անապահով վիճակում գտնվող տնտեսությունների ներկայացուցիչներ: Սա թույլ է տվել նաև բացահայտել տվյալներ, որոնք մեզ հնարավորություն են ընձեռել նաև

ներկայացնել առաջարկներ աղքատության գնահատման սկզբունքների ու չափանիշների վերաբերյալ:

Փորձագիտական հարցազրույցներն իրականացվել են այնպիսի մարդկանց հետ, ովքեր հանդիսանում են ուսումնասիրվող հիմնախնդրի ու հարցերի ընդհանրացված գիտելիքների կրողները: Դրանց շարքում ընդգրկվել են

- ՀՀ կառավարության, ճյուղային նախարարությունների աշխատակիցներ
- ԿԶԾ աշխատանքային խմբի ներկայացուցիչներ,
- Դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ և դասախոսներ Երևանում, մարզային քաղաքներում և գյուղերում,
- Բուժհիմնարկների աշխատակիցներ Երևանում, մարզային քաղաքներում և գյուղերում,
- Անկախ փորձագետներ, վերլուծաբաններ,
- Կրթության, սոցիալական և առողջապահական ոլորտների ՀԿ ների ներկայացուցիչներ Երևանում և մարզերում
- Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման աշխատակիցներ, գյուղապետներ:

Հետազոտությունների տվյալների ձևավորմանը մեծապես նպաստել են նաև հիմնախնդրի լուսաբանմանը նվիրված, արդեն գոյություն ունեցող հրապարակումներ, վերլուծություններ, զեկույցներ և այլ գրավոր աղբյուրների նյութեր, որոնց ամբողջական ցանկը կցված է:

# ***1. Ճգնաժամի սոցիալ տնտեսական հետևանքները և դրանց ազդեցությունը աղքատ ու անապահով խավերի կրթական և առողջապահական կարիքների վրա***

## ***1.1. Ճգնաժամի սոցիալական հետևանքների ընդհանուր բնութագիրը***

2008 թ. վերջին եռամսյակում սկիզբ առած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ծանր ու բացասական ազդեցություն ունեցավ ՀՀ տնտեսության վրա: 2008 թ. նախատեսված 13.9 % տնտեսական աճի փոխարեն գրանցվեց ընդամենը 6.2 % աճ: Իսկ արդեն 2009 թ. գրանցված 16.1 % տնտեսական անկումը հսկայական բարդություններ առաջացրեց ՀՀ կառավարության համար, ձևավորելով բյուջետային լարվածության ծանր իրավիճակ: Նախատեսված բյուջետային եկամուտներն ու ծախսերը բնականաբար կորցրեցին իրենց իրատեսականությունը և կառավարությունը ստիպված էր վերանայել երկարաժամկետ, միջնաժամկետ ու կարճաժամկետ բոլոր ծրագրերը: Զգալիորեն տուժեց հատկապես 2007-ին Կայուն Զարգացման Ծրագիր վերանվանված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը՝ ԱՀՌԾ-ն: Կարելի է ասել, որ 2009 թվականից ծրագրի իրագործումը փաստացիորեն սառեցված է, քանի որ դրանով նախատեսված ոլորտային ծրագրերը և կանխատեսվող արդյունքները տնտեսական ծայրաստիճան անկման ու բյուջետային լարվածության պայմաններում փաստացիորեն չեն իրականացվել: Կառավարությունն անցավ ճգնաժամային իրավիճակի մարտավարության, կենտրոնացնելով իր սահամափակ ռեսուրսները առավել խոցելի ու ռիսկային ոլորտների վրա: Այս առումով, առաջնային նշանակություն տրվեց սոցիալական քաղաքականությանը: Հատկապես, կարևորվեց սոցիալական տրանսֆերտների/նպաստների ծրագրի իրագործմանը, քանի որ այդ ծրագրի շահառուները առավել ռիսկային գոտում գտնվող ծայրահեղ աղքատ ու աղքատ խմբերից էին, որոնց աչքաթող անելը բառի իրական իմաստով կարող էր դառնալ սոցիալական և հումանիտար աղետի պատճառ:

Պահպանվեցին նաև պետական բյուջետային հիմնարկությունների աշխատավարձերի չափերն ու ժամանակին վճարումները: Այս միջոցառումները չափազանց կարևոր դեր խաղացին ճգնաժամի սոցիալական հնարավոր հետևանքները մեղմելու ու կանխելու տեսանկյունից: Պահպանվեցին նաև մինչև ճգնաժամը նախատեսված այն կրթական ու առողջապահական ծրագրերը, որոնք առանցքային բնույթ ունեին աղքատ ու անապահով խավերի համար առողջապահական ու կրթական ծրագրերի մատչելիությունը հնարավորինս ապահովելու տեսանկյունից: Ճիշտ է այստեղ զգալի նահանջ է նկատվում Կայուն զարգացման ծրագրով նախատեսված միջոցառումներից ու ակնկալվող արդյունքներից:

Ավելին, արդեն ճգնաժամի տարիներին ընդունվեցին մի շարք ծրագրեր, մասնավորապես առողջապահության ոլորտում 0-7 տարեկան երեխաների անվճար բուժօգնության և սուր հիվանդությունների բուժմանն ուղղված հավելավճարային ֆինանսավորման ծրագրերը: Երկրորդի իմաստն այն էր, որ սոցիալապես ոչ բարվոք վիճակում գտնվող խմբերի համար, որոնք չեն մտնում սոցիալական տրանսֆերտներ ու պետական անվճար բուժօգնություն ստացող խմբերի մեջ և ի վիճակի չեն լիովին հոգալ բուժման համար անհրաժեշտ ծախսերը, գինեկոլոգիական ու անհետաձգելի հիվանդությունների հատուկ ցանկի մեջ մտնող հիվանդությունների բուժման համար ծախսերի կեսը հոգում է պետությունը: Այդ ծրագրերը նույնպես անուղղակիորեն

որոշ դրական դեր խաղացին ճգնաժամի հետևանքում առողջապահական ծառայություններից օգտվելու մատչելիության առումով:

Չնայած սոցիալական ծրագրերի ոլորտում կառավարության գործադրած ջանքերին այնուամենայնիվ ճգնաժամի հետևանքները հիմնականում խիստ բացասական են: Պատճառները մի քանիսն են.

- նախ, չնայած հիմնականում սոցիալական տրանսֆերտների քաղաքականության պահպանմանը, ըստ փորձագետների հետ ունեցած հարցազրույցների տվյալների, այնուամենայնիվ սոցիալական ոլորտի ծրագրերում կրճատումներ եղել են,
- երկրորդ, չի իրականացվել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի աղքատ ու անապահով խավերի վրա հնարավոր ազդեցությունների ու հետևանքներին նվիրված հետազոտություններ ու գնահատումներ, որոնք թույլ կտաին արդյունավետ և թիրախային կանխարգելիչ քայլեր ձեռնարկելու: Ազգային վիճակագրական տարգրքի վերջին թողարկումը վերաբերում է 2010 թ., որում սակայն աղքատության հիմնախնդրին վերաբերող տվյալները հիմնականում վերաբերում են 2008 թ. և որևէ կերպ չեն կարող փաստագրական հիմք հանդիսանալ իրատեսական քաղաքականություն մշակել և իրականացնելու համար
- ճգնաժամի հետևանքում տեղի է ունեցել աղքատ ու անապահով խավերի եկամուտների կտրուկ անկում, որը գցել է նրանց առաջնային կարիքների ապահովման ունակության աստիճանը
- տեղի է ունեցել գների կտրուկ ու զգալի աճը, որը գումարվելով եկամուտների կրճատմանը կրկնակի ծանրացուցիչ պատճառ դարձավ,
- գնաճի պայմաններում, երբ սոցիալական նպաստների չափերն ըստ էության չաճեցին, տեղի ունեցավ դրանց արդյունավետության զգալի նվազում,

Այսպիսով, կարելի է ասել, որ չնայած կառավարության սոցիալական նպաստների տրամադրման ծրագրերի մինչճգնաժամային մակարդակի պահպանմանը, ճգնաժամի սոցիալտնտեսական հետևանքները խիստ ծանր են տանում աղքատներն ու անապահովները:

Ճգնաժամի սոցիալական հետևանքների քանակական պատկերը դրա բացասական ազդեցության վառ վկայությունն է: Ընդամենը մեկ տարում աղքատների թիվը ըստ տարբեր հետազոտական տվյալների աճել է մինչև 11 %-ով կազմելով մոտ 34 %: Ինչ վերաբերում է ծայրահեղ աղքատներին, ապա 2008 թ. սկզբին գրանցված 3.2 % ցուցանիշը աճեց 2.7 անգամ և 2009 թվին կազմեց 8.7 %:

Չնայած պաշտոնական տվյալներով գրանցվել են աղքատների ու ծայրահեղ աղքատների թվի զգալի աճ, սակայն մեր հետազոտությունը ցույց է տալիս, որ բնակչության մեջ, ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում աղքատների թիվը կարող է լինել շատ ավելին է, քան հրապարակված տվյալները: Կա նաև մեկ այլ իրական հիմնահարց: Սոցիալական տրանսֆերտներ կամ այսպես կոչված նպաստներ ստացողների ցուցակներում ընդգրկված աղքատներից բացի հասարակության մեջ կա անապահովների մի զգալի խավ, որը բնութագրվում է իր առաջնային անհրաժեշտության կարիքների նվազագույնը ինքնուրույն բավարարելու անկարողությամբ, սակայն չի հաշվառված աղքատների ցանկում: Սրանց եկամուտները, նպաստ ստացողներից տարբերվում է հաճախ 2000-3000 դրամով, սակայն միայն այն պատճառով որ դուրս են մնացել նպատառուների ցուցակներից զրկվել են նաև անվճար այլ սոցիալական ծառայություններից օգտվելու

մատչելիությունից: Մասնավորապես, ծանր է ազդում իրենց վրա անվճար առողջապահական ծառայության անմատչելիությունը: Պրոբլեմն ավելի է սրվում այն պատճառով, որ նպաստառուների գրանցման ու ցուցակագրման չափանիշներն ու մեխանիզմները այնքան անկատար են, որ դրանցից հաճախ դուրս են թողնում իրականում ծայրահեղ աղքատներին ու աղքատներին: Դրա հետևանքում, ինչպես նշվեց աղքատ տնային տնտեսություններից շատերը ոչ միայն զրկվում են սոցիալական նպաստներից, այլ նաև այլ բնույթի սոցիալական աջակցությունից: Ավելին, ճգնաժամից հետո սոցիալական նպաստառուների ցուցակների մաքրման աշխատանքների հետևանքում ոչ միայն դրանցից դուրս են հանվել իրականում աղքատների ու ծայրահեղ աղքատների խավերին չպատկանողները, այլ նաև իրական աղքատության մեջ գտնվողները: Մեր գրանցած նյութերում հաճախ են այնպիսի դեպքերը, երբ աշխատավարձի կամ կենսաթոշակի ընդամենը 2000-5000 դրամով բարձրացումը տնային տնտեսությանը զրկել է սոցիալական նպաստ ստանալու հնարավորությունից և մնալով ընդամենը 35000 դրամ աշխատավարձի հույսին, տնային տնտեսությունը իրականում հայտնվում է ծայրահեղ աղքատության մեջ:

*Ամուսինս չի աշխատում: Մի քանի տարի է արդեն առողջական վիճակի վատացման պատճառով չի կարողանում աշխատել: Ես աշխատում եմ պետական հիմնարկությունում: Մինչև ճգնաժամը ստանում էին 31000 դրամ աշխատավարձ ու նաև սոցիալական նպաստ: Բայց անցած տարի աշխատավարձս բարձրացրեցին ու դարձրեցին 32500 ու դրա պատճառով դուրս հանեցին նպաստառուների ցուցակից, ասելով որ իմ աշխատավարձի չափն այնքան բարձր է, որ մեզ նպաստ չի հասնում: Ուրիշ աշխատանք էլ չկա, որ այդտեղից դուրս գամ, գնամ այնտեղ: Ես էլ, ամուսինս էլ բարձրագույն կրթություն ունենք, բայց ամենավերջին աղքատից էլ վատ ենք ապրում: Հիմա երեք դպրոցական երեխա ունեմ, հիվանդ ամուսին ու դուռ ինքներդ ասեք, թե այդ աշխատավարձով ոնց է հնարավոր ապրել: Մարդ չի հասկանում, թե էլ ինչ կարելի է անել:*

Կանաց ֆոկլուս խումբ, ք. Գորիս, Սյունիքի մարզ

Նկատենք, որ մեզ հանդիպած նման օրինակները բազմաթիվ են: *Կարելի է ասել, որ ճգնաժամը ոչ միայն մեծացրել է պաշտոնապես գրանցված աղքատների թիվը 11 %-ով, այլ նաև զգալիորեն ընդլայնել ծայտված աղքատների ու աղքատության ռիսկային զծին հարողների թիվը:*

Այս պատճառով մենք վերլուծության հետագա ընթացքում «աղքատներ» եզրին գուգահեռ կկիրառենք նաև «անապահովներ» եզրը, որի տակ նկատի կունենանք այն խավերին, որոնք իրականում իրենց սոցիալական ներկա վիճակով չեն տարբերվում աղքատներից կամ այդ տարբերությունն այնքան չնչին է, որ չի փոխում նրանց կենսապահովման ու մարդկային զարգացման բնութագիրը:

Հետազոտության ընթացքում պարզվեց նաև, որ ճգնաժամի սոցիալական հետևանքների սրությունը տարբեր համայնքների վրա տարբեր է: Հիմնականում առավել ծանր իրավիճակ է ստեղծվել հաղորդակցման ուղիներից հեռու, բնակլիմայական ոչ բարենպաստ գոտիներում գտնվող գյուղական համայնքներում: Համայնքային մակարդակում ճգնաժամից առավել տուժած հատուկ խումբ կարելի է համարել արտագնա աշխատանքային միգրացիայի բարձր մակարդակով բնութագրվող գյուղական համայնքները: Արտագնա աշխատանքի ծավալների կտրուկ կրճատումը հանգեցրել է տնային տնտեսությունների գերակշիռ մասի սոցիալական վիճակի վատթարացման: Եկամուտների կրճատումը հանգեցրել է.

- բնակչության հարկային վճարումներ կատարելու անընդունակության, համայնքի բյուջե հարկային մուտքերի ծավալների կրճատման
- էականորեն կրճատվել են նաև գյուղատնտեսության մեջ ներդրվող գումարների և գյուղատնտեսական հողերի մշակման ծավալները,
- համայնքի բյուջեի ծավալների կրճատման պատճառով կրճատվել են նաև նախակրթական ու հանրակրթական ոլորտների վրա ՏԻՄ կողմից իրականացվող ծախսերը,
- Զգալիորեն նվազել է նաև գյուղացիների միմյանց փոխադարձ օգնությունն ցուցաբերելու հնարավորությունները:

Այսինքն կարելի է ասել, որ հանրապետական մակարդակում ճգնաժամի հարուցած հիմնախնդիրները մի շարք դեպքերում ձեռք են բերել նաև համայնքային բնույթ, որը նվազեցրել է տեղական ինքնակառավարման մակարդակում որոշ հիմնախնդիրների լուծումները գտնելու հնարավորությունները, ինչը կարող է լրացուցիչ ծանրացուցիչ հանգամանք դառնալ կենտրոնական իշխանությունների համար: Եթե կան համայնքներ, որտեղ ՏԻՄ-ը որոշակի սոցիալական ու կրթական ծրագրեր է իրականացնում, ինչպես օրինակ հոգում է երեխաներին կրթության նպատակով մարզկենտրոն կամ Երևան երթևեկելու տրանսպորտային ծախսերը, կամ տարրական դասարանների երեխաների համար իրականացնում է դպրոցական սնունդի ծրագրեր և այլն, որոնք էական օժանդակություն են հատկապես սոցիալապես անապահով տնային տնտեսությունների համար, ապա աղքատ համայնքները չկարողանալով որևէ կերպ մասնակցել անապահովների հոգսերի թեթևացմանը, դառնում են տարբեր բնակավայրերում մարդկային անհավասար զարգացման գործոն: Այս առումով հատկապես կարևոր է նման համայնքներ օժանդակող ծրագրեր ուղղորդման նպատակով, իրազեկման ու լոբբինգային միջոցառումների իրականացում բարեգործական, միջազգային ու հասարակական կազմակերպությունների միջավայրում:

Այսպիսով, որպես աղքատ ու անապահով խավերի սոցիալական վիճակի վատացման վրա ազդող ճգնաժամի հարուցած առանցքային հիմնախնդիրներ կարելի է առանձնացնել.

- աշխատատեղերի կրճատումը,
- աշխատավարձերի կրճատումը,
- արտագնա աշխատանքի մեկնողների թվի և արտերկրից ստացվող դրամական փոխանցումների զգալի նվազումը,
- ճգնաժամին ուղեկցող պարենային մթերքների և առաջնային սպառման այլ ապրանքների կտրուկ ու մեծ գնաճը:

Ի դեպ աշխատատեղերի կրճատումը բնորոշ է ինչպես Երևանին, այնպես էլ մարզերին: Հատկապես, դա նկատելի է շինարարության ոլորտում ընդգրկված, ոչ բարձր վարձատրվող արհեստավորական կամ բանվորական աշխատուժի միջավայրում: Որոշ առումով աշխատատեղերի կրճատում է նկատվել նաև մշակող արդյունաբերության, մասնավորապես, հանքարդյունաբերության ոլորտում: Սակայն, հարկ է նշել վերջին մեկ տարում այս ոլորտի նկատելի աշխուժացման հետևանքում բնակչության զբաղվածության ու աշխատատեղերի ավելացումը: Չնայած, սա թույլ է տալիս որոշ առումով թուլացնելու հանքարդյունաբերական շրջաններում առաջացած սոցիալական լարված վիճակը, սակայն չի կարելի պնդել, որ դա



նպաստում է այդ տարածաշրջանի բնակչության մարդկային զարգացմանը, քանի որ ունենում է բացասական բնապահպանական ու առողջապահական հետևանքներ: Հեռանկարային առումով այն բացասաբար է ազդում մարդկանց կյանքի որակի ու տևողության վրա:

*Աշխատավարձերի կրճատումները* ճգնաժամային շրջանին բնորոշ մյուս հիմնական հետևանքներից է: Աշխատավարձերի կրճատումը հաճախ հանդես է գալիս ոչ միայն ուղղակի, այլ նաև ծպտված ձևերով: Դրա առավել տարածված դրսևորումը աշխատանքի ծավալների մեծացման, երբեմն նույնիսկ կրկնապատկման պայմաններում նույն աշխատավարձի պահպանումն է:

Ընդհանրապես, մասնավոր ձեռներեցները ճգնաժամի ազդեցության տակ ձգտելով նվազեցնել իրենց ծախսերը, գնացել են կամ աշխատատեղերի, կամ աշխատավարձերի կրճատման, որը դրսևորվել է հետևյալ ձևերով.

- աշխատատեղերի կրճատում և մնացած աշխատավորների ծանրաբեռվածության մեծացում նույն աշխատավարձերի պահպանման պայմանում,
- աշխատատեղերի պահպանում, սակայն աշխատավարձերի զգալի կրճատում,
- աշխատատեղերի կրճատում և, միաժամանակ, մնացած աշխատողների աշխատավարձերի կրճատում:

Բոլոր դեպքերում էլ հիմնական տուժողները եղել են աղքատ ու անապահով խավերը, կամ իրենց իսկ բնութագրմամբ առաջնային կարիքները ոչ լիարժեքորեն բավարարող սոցիալական խմբերի ներկայացուցիչները:

Արտագնա աշխատանքի ծավալների կրճատումը, թերևս ճգնաժամի ամենասուր հետևանքներից էր: Հայաստանի համար աշխատանքային միգրացիան և արտերկրից Հայաստան հարազատներին ուղարկվող դրամական տրանսֆերտները չափազանց ազդեցիկ դեր են ունեցել ոչ միայն առանձին վերցրած տնային տնտեսությունների, այլ նաև առանձին վերցրած բնակավայրերի, տարածաշրջանների ու վերջապես ողջ Հայաստանի համար: Ինչպես ցույց են տալիս որոշ վերլուծություններ, Հայաստան ուղարկվող դրամական տրանսֆերտները օգտագործվել են ոչ միայն ընտանիքների առաջնային, այնպես էլ մարդկային զարգացման կարիքները հոգալու համար (Միգրացիա և մարդկային զարգացում, էջ 162-167): Շատ ընտանիքներ դրանց միջոցով են ապահովել իրենց ոչ միայն սննդի, հագուստի ու ջեռուցման առաջնային կարիքները, այլ նաև երեխաների կրթության, ընտանիքի անդամների առողջապահական, բնակարանի վերանորոգման ու պայմանների բարելավման և զարգացման հետ կապված այլ կարիքներ: Այսինքն, հստակ կարելի է ասել, որ Հայաստանի մարզային բնակավայրերից որոշներում բնակչության համար արտագնա աշխատանքը նպաստում է լուծելու ոչ միայն կարճաժամկետ, այլ նաև երկարաժամկետ ու ռազմավարական բնույթի խնդիրներ: Հայաստանի համար զգալի է հատկապես Ռուսաստանի Դաշնություն աշխատանքային միգրացիան: Ճգնաժամի հետևանքում ՌԴ-ում զգալիորեն կրճատվեց աշխատանքային միգրանտների պահանջարկը, ինչը խիստ բացասաբար ազդեց հայաստանցի միգրանտների վրա: Ինչպես ցույց են տալիս մեր կողմից իրականացված որակական հետազոտության տվյալները, ճգնաժամի հետևանքում ոչ միայն կրճատվել է մեկնողների թիվը, այլ նաև մեկնածների մեջ քիչ թե շատ հաջող վարձատրվող աշխատանք գտածների ու իրենց ընտանիքներին նյութական օժանդակություն ցուցաբերելու ունակություն ունեցողների թիվը: Արտագնա աշխատանքի մեծ ծավալներ ունեցող գյուղական որոշ

բնակվայրերում, որտեղ արտագնա աշխատանքը գոյատևման գլխավոր միջոցն է համարվել, ընտանիքին օգնելու հնարավորություն տվող աշխատանքային միգրանտների թիվը կրճատվել է շուրջ 70 %-ով:

*Մեր գյուղում մոտ 170 տնտեսություն կա: Դրանցից մի 100 խոպան զնացողներ ունենն ու համարյա բոլորն էլ հաջող էին վաստակում: Բայց, անցյալ տարի մոտ 30-ն են մեկնել: Բայց դրանցից մի 16-17-ն են այնքան աշխատել, որ կարողացել են փող ուղարկեն տուն: Մնացածը, հազիվ հետ գալու փող են աշխատել:*

Տղամարդկանց ֆոկլուս խումբ, գ. Կապս, Շիրակի մարզ

Նշվածը ազդել է ոչ միայն ընտանիքների կենսամակարդակի կտրուկ վատթարացման, այլ համայնքներում գյուղատնտեսության բնագավառում ճգնաժամային վիճակի ձևավորմանը: Խնդիրն այն է, որ արտագնա աշխատանքի տարածվածությամբ բնորոշվող գյուղերում գյուղատնտեսությամբ զբաղվելու, հատկապես երկրագործությամբ զբաղվելու հնարավորությունը նույնպես կապված է արտագնա աշխատանքի հետ, քանի որ սերմնացուի, գյուղատնտեսական տեխնիկայի վարձակալման և անհրաժեշտ վառելիքի, հաճախ նաև հողի ու ջրի հարկերի գումարները հնարավոր է եղել վճարել արտագնա աշխատանքից ստացվող եկամուտների շնորհիվ: Այսինքն, արտագնա աշխատանքը տարիներ շարունակ, մի շարք բնակավայրերում եղել է գյուղատնտեսական աշխատանքներում ներդրումներ կատարելու հիմնական աղբյուրներից մեկը: Նման ռազմավարություն ունեցող գյուղերում արտագնա աշխատանքից ստացվող եկամուտների կրճատումը կաթվածահար վիճակի առաջ է կանգնեցրել նաև հողերի մշակման աշխատանքները: Մրան գումարվել է նաև պարարտանյութերի, սերմնացուի, վառելիքի, տեխնիկայի վարձակալման և այլ ծախսերի թանկացումները և ճգնաժամը գյուղատնտեսությունը կանգնեցրել է ծայրահեղ բնույթի փաստի առջև:


*Պարենամթերքների ու առաջնային սպառման ապրանքների գների թռիչքաձև աճը, վառելիքի, գազի շոշափելի թանկացումները ճգնաժամի մյուս շոշափելի սոցիալական արձագանքներ թողած հետևանքներից է: Նշվածը, հատկապես, սուր բնույթ է ստանում բնակչության եկամուտների և աշխատեղերի կրճատումների ուղեկցության պարագայում: Գների թանկացումները, բնակչության լայն զանգվածների միջավայրում եկամուտների կրճատման հետ միասին բազմապատկել ու սրացրել է առանց այն էլ ծանր վիճակում հայտնված աղքատ ու անապահով տնային տնտեսությունների վիճակը` սրելով ինչպես սննդի ու առաջնային այլ կարիքների բավարարման հիմնախնդիրը, այնպես էլ բացասաբար ազդելով մարդկային զարգացման համար նշանակալի աղքատ ու անապահով խավերի առողջապահական ու կրթական կարիքների բավարարման վրա:*

## *1.2. Ճգնաժամի սոցիալական հետևանքները աղքատ ու անապահով խավերի վրա*

Եկամուտների շեշտակի անկումը և ծախսերի բարձրացումը սոցիալական ռիսկային գոտիներում գտնվող շատ ընտանիքների համար առաջացրել է մի վիճակ, երբ ռազմավարական գերակա խնդիր է դարձել ընտանիքի անդամների ֆիզիկական կենսապահովման ու գոյատևման կարիքների բավարարումը: Ըստ փորձագիտական հարցման արդյունքների, ճգնաժամը շատ սուր կերպով է անդրադարձել աղքատների


ու անապահովների կյանքի վրա, սրելով հատկապես սնունդի, բնակարանի ջեռուցման, կոմունալ, կենցաղային ու առողջապահական կարիքների բավարարման խնդիրը: Հարցմանը մասնակցածների 64.4 %-ը գտնում է, որ ճգնաժամը սոցիալապես անապահովների կյանքի վրա *շատ սուր է ազդել*, իսկ 39.6 %-ը գտնում է, որ *մասնակիորեն է ազդել*: Հատկանշական է, որ փորձագետներից ոչ մեկը չի համաձայնվել այն պատասխանի հետ, որ ճգնաժամը ընդհանրապես չի ազդել սոցիալապես անապահովների կյանքի վրա.

**նկար 1.** Ձեր կարծիքով արդյո՞ք համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ազդեցություն է ունեցել սոցիալապես անապահով խավերի կյանքի վրա



Փորձագետների 87.5 %-ը գտնում է որ ճգնաժամը առավել սուր կերպով ազդել է սնունդի կարիքների բավարարման վրա, 72,9 % է կազմում կոմունալ և կենցաղային կարիքների սրմանը վերաբերող պատասխանների թիվը, 77,1 %՝ առողջապահական, 31.2 % բնակարանի ջեռուցման, 16.7 % հագուստի և 12.5 % երեխաների կրթությանը վերաբերող պատասխանները.

**նկար 2.** Հատկապես, ո՞ր կարիքների բավարարման վրա է այն առավել սուր կերպով այն անդրադարձել (կարող եք ընտրել մինչև 3 պատասխան)



Փորձագիտական հարցման տվյալները հիմնականում համընկնում են աղքատ ու անապահով խմբերի միջավայրում իրականացված ֆոկուս խմբային հարցումների տվյալներին, համաձայն որոնց աղքատ ու անապահով խմբերի համար ճգնաժամի հարուցած կարիքների բավարարման բարդությունները բաժանվում են երկու խմբի.

1. կենսապահովման ու գոյատևման նվազագույն կարիքներ,
2. զարգացման կարիքներ:

Կենսապահովման ու գոյատևման կարիքներից աղքատ ու անապահով տնային տնտեսություններին հաջողվում է լուծել.

- սննդամթերքի նվազագույն կարիքները ոչ լիարժեքորեն,
- հագուստի նվազագույն կարիքները ոչ լիարժեքորեն,
- բնակարանի ջեռուցման նվազագույն կարիքները ոչ լիարժեքորեն:

Ինչ վերաբերում է սոցիալական բնույթի ու զարգացման կարիքներին. աղքատ ու անապահով տնտեսություններին հաջողվում է լուծել շատ սահմանափակ բնույթի կարիքներ.

- երեխաների կրթության կարիքները ոչ լիարժեքորեն,
- առողջապահական կարիքները խիստ մասնակիորեն:

Քանի որ կրթական ու առողջապահական կարիքների հիմնահարցին անդրադառնալու ենք առանձին, ապա այս պարագրաֆում կքննարկենք միայն կենսապահովման ու գոյատևման կարիքների բավարարման հիմնախնդիրները:

Կենսապահովման ու գոյատևման նվազագույն կարիքների տակ հարցման մասնակիցները նկատի ունեն մարդու ֆիզիկական գոյատևումն ու վերարտադրությունը իրականացնելու համար անհրաժեշտ սննդի, հագուստի բնակարանի ջեռուցման ու կենցաղային պահանջմունքների բավարարմանն ուղղված կարիքները:

Հարկ է նկատել, որ աղքատ ու ծայրահեղ աղքատ ընտանիքները, որոնց զգալի մասը մտնում են նպաստառուների ցուցակների մեջ, նույնիսկ նպաստ ստանալու պարագայում չեն կարողանում լուծել իրենց ընտանիքի ամենապարզագույն կարիքները: Ասենք օրինակ, նպաստի չափը չի օգնում հոգալու նույնիսկ ֆիզիկական առողջ վերարտադրություն ապահովող սնունդի պահանջմունքը: Դա նշանակում է, որ *Հայաստանում տրվող սոցիալական նպաստների չափը աղքատ ու անապահով ընտանիքներին թույլ չի տալիս ապահովել մարդու առողջ ֆիզիկական վերարտադրության համար անհրաժեշտ նվազագույն սննդակարգը*: Խոսքը վերաբերում է տնային տնտեսության ստացած եկամուտով մարդու կեսագործունեության համար անհրաժեշտ բավարար ու բազմազան սննդակարգի ապահովման անհնարինությանը: Ասենք օրինակ մսամթերքների, ձկնամթերքի, կաթնամթերքի, բանջարեղենի և վիտամիններ ու այլ բաղադրատարրեր պարունակող նվազագույն սնունդ ձեռք բերելուն: Հատկանշական է, որ գյուղերում բնակվող որոշ աղքատ ընտանիքներում, երեխաները չեն ստանում կաթնամթերքների անհրաժեշտ բաժին, որովհետև ընտանիքի ռազմավարությունները ուղղված են սոված չմնալուն, այլ ոչ թե առողջ ու բազմազան սնվելուն: Մեր գրանցած տվյալների համաձայն, հաճախ է հանդիպում, որ տնային տնտեսությունը, իր սննդակարգում բացառելով իր իսկ արտադրած կաթնամթերքներն ու այլ գյուղմթերքները, վաճառում է դրանք,

որպեսզի դրանից ստացված գումարով կարողանա գնել այն քանակի հացամթերք ու մակարոնեղեն, որը թույլ կտա նրան լուծել սովից խուսափելու խնդիրը:

Իհարկե կարելի է ասել, որ նպաստի միջոցով, ծայրահեղ աղքատ ընտանիքները փրկվում են սովից: Այդ գումարները նրանց թույլ է տալիս գնել էժանագին մակարոնեղենի, այլ հացամթերքների և կարտոֆիլի այնքան պաշարներ, որոնք բավարար են սոված չմնալու համար:

Կարելի է ասել, որ ճգնաժամի հետևանքում սրվել է այն իրավիճակը, երբ աղքատ ու ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների հիմնական մասը կարողանում է լուծել ընդամենը սոված չմնալու ու ֆիզիկապես ոչ լիարժեք կերպով գոյատևելու հարցը: Իսկ եթե հաշվի առնենք, այն, որ ըստ փորձագիտական և ֆոկլոր խմբային հարցումների, բավական տարածված է նաև սնունդի կարիքների ու ծախսերի կրճատման հաշվին երեխաների կրթական ու այլ անհրաժեշտ կարիքները հոգալու պրակտիկան, ապա կարելի է ասել, որ, չնայած, սոցիալական նպաստների ներկայիս քաղաքականությունը անշուշտ կանխում է հումանիտար աղետի ու ծայրահեղ բնույթի հիմնախնդիրների առաջացումը, սակայն *դրա դերակատարությունը աղքատների ու անապահովների մարդկային զարգացման առումով խիստ անբավարար է*: Հարկ է նկատել նաև, որ ճգնաժամին ուղեկցած սննդամթերքի ու լայն սպառման ապրանքների զգալի գնաճը բացասաբար է ազդել սոցիալական նպաստների արդյունավետության վրա:

*Ավելին, մեր հետազոտական տվյալները ցույց են տալիս, որ ճգնաժամի հետևանքում տեղի է ունեցել բնակչության սոցիալական կառուցվածքի փոփոխություն: Ճգնաժամը բնակչության մի զգալի հատվածին եկամուտների ու ապառման նկարագրով մոտեցել է աղքատների ու շատ աղքատների խավին:* Այս խավի վիճակը բարդ է հատկապես մարզային քաղաքներում ու Երևանում: Գյուղերում, հաշվի առնելով բնատնտեսական որոշ մթերքների առկայությունը, նման եկամուտը թույլ է տալիս լուծել նվազագույն խնդիրները, սակայն քաղաքներում այս եկամտային խավի տնային տնտեսությունները մի կերպ գոյատևողների շարքում են: Մրանք նաև այն տնային տնտեսություններն են, ովքեր չմտնելով սոցիալական նպաստառուների ցուցակներում զրկված են նաև արտոնյալ կամ անվճար առողջապահական ծառայությունների հնարավորությունից: Սակայն, անորակ ու ոչ սննդարար կերակրացանկի ու սոցիալական տարատեսակ անհանգստությունների ու վախերի պառճառով այս խավերի մոտ հաճախ առաջանում են առողջապահական պահանջներ, որոնք նրանք ի վիճակի են բավարարել խիստ մասնակիորեն: Այս տնային տնտեսությունները դժվարությամբ են կարողանում հոգալ նաև ձմռանը բնակարանի ջեռուցման խնդիրները: Գազի ու հոսանքի վերջին թանկացումներից հետո նրանցից շատերը հրաժարվել են բնակարանի ջեռուցման այդ եղանակներից, անցնելով նորից փայտի վառարաններին:

*Աղքատ, ծայրահեղ աղքատ ու անապահով տնային տնտեսությունները չնայած տարբերվում են իրարից առաջնային նվազագույն պահանջմունքների բավարարման կարողությունների աստիճանով, սակայն հաճախ ընդհանրանում են այն դժվարությունների ու հիմնախնդիրների նկարագրով, ինչը նրանց չի հաջողվում լուծել:* Եկամտային այն շերտը, որը չի մտնում նպաստառուների ցանկերում և չի դասվում աղքատների ու շատ աղքատների շարքը, իրականում նույնպես գոյատևման այնպիսի նվազագույն կարիքներն է կարողանում միայն հոգալ, որոնց պայմաններում չափազանց նվազում են մարդկային զարգացման հնարավորությունները: Ըստ


Լուծյան, այս խավերը, եթե նույնիսկ ՀՀ-ում սահմանված աղքատության գնահատման չափանիշներով չեն էլ դասվում աղքատների շարքում, ապա միևնույն է մարդկային զարգացման տեսանկյունից անկարողունակ են և ընդհանրապես են աղքատ ու ծայրահեղ աղքատ խավերի հետ ստորև թվարկված պահանջմունքների բավարարման անկարողության հարցում.

- նվազագույն բազմազանություն պարունակող սննդամթերքի այնպիսի տեսականու կարիքը, որն իր մեջ պարունակի մարդու առողջ ու երկարատև կյանքի երաշխիք հանդիսացող սնունդ,
- Բնակարանային ու կենցաղային այնպիսի կարիքները, որոնք անհրաժեշտ են մարդու առողջության ու նվազագույն հարմարավետության համար,
- Բնակարանի ջեռուցման այնպիսի նվազագույն կարիքները, որոնք ձմեռային եղանակներին թույլ կտան օգտագործելի դարձնել ողջ բնակատարածքը,
- Երեխաներին ունակությունները բացահայտելու ու զարգացնելու, նրան կյանքում ռեալիզացվելու ու զարգանալու հեռանկար ձևավորող կրթություն ստանալու կարիքը
- Երեխաների գեղագիտական, հոգևոր, մշակութային բնույթի ճաշակ զարգացնելու համար անհրաժեշտ արտադպրոցական կրթություն ստանալու կարիքը
- Առողջական որևէ խնդիր ծագելու դեպքում այն անմիջապես լուծելու կարիքը
- Հագուստի այնպիսի կարիքը, որը թույլ կտա տարվա բոլոր եղանակների համար ունենալ սոցիալապես ներկայանալի և հասարակության մեջ սոցիալապես խտրական կարգավիճակ չառաջացնող հագուստ,
- Հասարակական կյանքին մասնակցելու այնպիսի նվազագույն կարիքները, որոնցից օտարված վիճակը չի ձևավորում սոցիալապես լուսանցքային կարգավիճակ: Ասենք օրինակ հյուր գնալու ու ընդունելու, ինչպես բարեկամական, այնպես էլ հասարակական ավելի լայն բնույթի տարբեր միջոցառումների մասնակցելու պահանջմունքը,
- Մշակութային ու ժամանցային բնույթի կարիքները, որոնք թույլ են տալիս մարդուն հաղթահարել իր սոցիալական մեկուսացվածությունը և կանխել սոցիալական կապիտալի արժեզրկումը:

### *1.3. Աղքատ ու անապահով խավերի կրթական կարիքների վրա ճգնաժամի ազդեցության նկարագիրը և դրա պատճառները*


Ըստ իրականացված փորձագիտական հարցման տվյալների, գերիշխող է այն կարծիքը, որ ճգնաժամը զգալիորեն է ազդել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կրթության վրա: Այդ կարծիքին է հարցված փորձագետների 43.8 %-ը: Փորձագետների մնացած մասը` 56.2 %-ը, եթե նույնիսկ ճգնաժամի ազդեցությունը չի համարում զգալի, գտնում է, որ համենայնդեպս այն ունեցել է մասնակի ազդեցություն.

**Նկար 3.** Ազդել է արդյո՞ք ճգնաժամը սոցիալապես անապահով երեխաների կրթության վրա



Ճգնաժամի թողած հետևանքներին տարբեր գնահատականներ են տրվում: Առավել տարածված է այն կարծիքը, որ նվազել է սոցիալապես անապահով երեխաների հաճախումների ծավալը: Այդ կարծիքին են հարցին պատասխանած փորձագետների 56.2 %-ը: Իսկ 50.0 %-ի կարծիքով էլ ընկել է ուսման հանդեպ նրանց հետաքրքրվածությունը: 29.2 %-ն էլ կարծում է, որ ճգնաժամի թողած հետևանքների ազդեցությամբ նվազել է սոցիալապես անապահով երեխաների ուսման առաջադիմությունը: Հաճախ է նշվում նաև, որ ճգնաժամի հետևանքում ձևավորված սոցիալական դժվարությունները բացասաբար են ազդել երեխաների ֆիզիկական ու հոգական վիճակի վրա: նման կարծիք են հայտնել փորձագետների 70.8 %-ը.

**Նկար 4.** Եթե Ձեր կարծիքով ճգնաժամը ազդել է երեխաների կրթության վրա, ապա ինչպե՞ս (կարող եք ընտրել մի քանի պատասխան)



Այս հիմնախնդրի քննարկումը աղքատների ու անապահովների ֆոկուս խմբերում, թույլ է տալիս եզրակացնել, որ հաճախումների նվազեցման պատճառները մի քանիսն են.

- նախ, հաճախ սոցիալապես անապահով երեխաները ներգրավում են վաստակելու ու ընտանիքի գոյատևումն ապահովելու գործերում ու այդպիսով ժամանակ չեն ունենում դպրոց հաճախելու,
- որոշ դեպքերում դպրոց չհաճախելու պատճառ է եղել անհրաժեշտ հագուստ չունենալը: Հատկապես, խոսքը վերաբերում է աշնանային ու ձմեռային հագուստին, կամ ընդհանրապես քիչ թե շատ ներկայանալի հագուստի առկայությանը,
- դպրոց չհաճախելու կամ ընդհատումներով հաճախելու պատճառների մեջ նշվում է նաև դասագրքերի ու գրենական պիտույքների ձեռք բերման ֆինանսական դժվարությունների պատճառով դրանց ժամանակավոր բացակայությունը:


Ըստ իրականացված հետազոտության տվյալների ներկայացված պատճառները ազդել են նաև սոցիալապես անապահով տնային տնտեսությունների երեխաների ուսման որակի ու առաջադիմության վրա: Երբեմն երեխաները ներգրավվելով այս կամ այն վաստակի ձևերում, հետ են վարժվել կրթության գործընթացներից, կրթական պրոցեսից ու դժվարություններ են ունեցել նորից ուսման գործընթաց ներգրավելու առումով:

Ինչ վերաբերում է երեխաների ֆիզիկական ու հոգեկան վիճակի վրա ճգնաժամի ազդեցությանը, ապա դրա պատճառների շարքում հաճախ նշվում է, հատկապես, տարրական դասարանների երեխաների թերսնման պատճառով ուշադրության կորուստը: Մեկ այլ պատճառ է ընտանիքում ծայրահեղ լարված սոցիալական իրավիճակի հետևանքում առաջացած հոգեբանական դեպրեսիվ վիճակը, որը երեխաների մոտ առաջացնում է ցրվածության, դասի վրա կենտրոնանալու բարդություններ, դասերով հետաքրքրվածության բացակայության հոգեվիճակ:

Կրթության ոլորտում սոցիալապես անապահովների համար ճգնաժամի հետևանքում առաջացած հիմնական պրոբլեմների շարքում հարցմանը մասնակցած փորձագետների 70.8%-ը առանձնացնում է դասագրքերի, 56.2 %-ը՝ գրանական պիտույքների ձեռք բերման դժվարությունները, 60.4 %-ը՝ արտադասարանական խմբակների ու պարապմունքների հաճախելը իսկ 47.9 %-ն էլ դպրոց հաճախելու համար անհրաժեշտ պատշաճ հագուստ ձեռք բերելու դժվարությունը: Որոշ դեպքերում (12.5 %) նշվում է նաև դպրոցներում տարբեր առիթներով կազմակերպվող դրամահավաքներին մասնակցելու բարդությունները, ինչի պատճառով երեխաները երբեմն ենթարկվում են ուսուցիչների անբարեհաճ վերաբերմունքին: Նշվածը հաստատում են նաև աղքատ ու անապահով տնային տնտեսությունների ներկայացուցիչների հետ հարցազրույցների տվյալները, որոնք հիմնական բարդությունների հարցում համընկնում են փորձագիտական տվյալների հետ:



**նկար 5.** *Ըստ Ձեզ, որո՞նք են այն հիմնական պրոբլեմները, որոնք առաջացել են սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կրթության ոլորտում (կարող եք ընտրել մի քանի պատասխան)։*



Հանրակրթական դպրոցներում սովորողների համար լուրջ պատուհաս է *արտադասարանական պարապմունքների հիմնահարցը*: Փաստորեն, վերջին ավելի քան տաս տարվա ընթացքում արմատավորվել է մի արատավոր մեխանիզմ, որ դասարանում հետ մնացող աշակերտների առկայության դեպքում ոչ միայն այդ ուսուցիչը չի տուժում, այլ հակառակը՝ ֆինանսապես շահում է: Թվանշանը ցածր դնելու պարտադրանքով այդ նույն ուսուցիչը ստիպում է երեխաներին հաճախել լրացուցիչ, վճարովի արտադասարանական պարապմունքների իր մոտ: Սովորաբար, դրանց հաճախելու բարդություններ ունենում են սոցիալապես անապահով տնտեսությունների երեխաները, ինչը բացասաբար է անդրադառնում և դասարանում նրա կարգավիճակի վրա և ուսման որակի: Շատ հաճախ, ծնողները երեխաներին նման տեսակի վիճակների մեջ չդնելու համար ստիպված են լինում պարտքերի կամ առաջնային անհրաժեշտության ծախսերի կրճատման հաշվին հոգավ նման լրացուցիչ ու արհեստական ստեղծվող կրթական ծախսերը, ինչը բավական ուժեղացնում է տնային տնտեսության սոցիալական լարվածությունն ու ծանրաբեռնվածությունը: Խնդիրն, հատկապես ավելի բարդ է լինում լուծել, երբ դպրոցական տարիքի երեխաների թիվը տնային տնտեսությունում մեկից ավելի է:


Ինչ վերաբերում է բարձրագույն կրթության ոլորտի հիմնախնդիրներին, ապա դրանք առաջին հերթին վերաբերում են երեխայի ուսման վարձավճարին և եթե է ուսանողն ապրում է Երևանում նաև նրա ապրուստի ծախսերը հոգալուն: Դժվարությունների շարքում առանձնացվում է նաև տրանսպորտային ծախսերի հիմնախնդիրը: Հատկապես, որ ուսանողը ամեն օր պետք է երթնելի կամ Երևան, կամ մարզկենտրոնի բուհական հաստատություն: Այս առումով սոցիալապես անապահովները կարևոր են համարում գյուղերից կամ փոքր քաղաքներից մայրաքաղաք կամ մարզկենտրոններ ուսանողներին տեղափոխող տրասպորտի խնդրի լուծմանն ուղղված ՏԻՄ ղեկավարների կամ մասնավոր բարեգործների

նախաձեռնությունները: Հարկ է նկատել, որ ըստ իրականացված հետազոտության որակական տվյալների ճգնաժամի ազդեցությունը աղքատների ու անապահովների բարձրագույն կրթություն ստանալու հեռանկարների վրա բավական ծանր է: Հարցումներին մասնակցածների հիմնական մասը վստահ չէ, որ երեխան կկարողանա շարունակել կրթությունը որևէ բուհական հաստատությունում: Սա նշանակում է, որ առանց այն էլ ավելի կարվի բարձրագույն կրթության ոլորտում առկա սոցիալական բևեռվածության վիճակը, որն ըստ նախաձգնաժամային շրջանի տվյալների ունեցել է հետևյալ պատկերը. բուհական համակարգում ընդգրկվածության ցուցանիշով անենահարուստ քվանտիլը գերազանցել է ամենաաղքատի ցուցանիշը 15 անգամ և հանրապետական միջին ցուցանիշը՝ 2.5 անգամ: Եթե ոլորտում ականկալվող էլ ավելի բևեռացման հիմնախնդիրը նկատի ունենանք, ապա բուհական ոլորտում աղքատ խավերի ընդգրկման ու մասնագիտական կրթության ստանալու հետ կապված միջոցառումների ծրագիրը, մարդկային զարգացման տեսանկյունից խիստ էական են դառնում: Այս առումով կարևոր է ավելացնել, որ փոխվել են նաև Մարդկային զարգացման համաթվի՝ ՄՉՀ բաղադրիչները և եթե մինչև 2009 թվականը ՄՉՀ-ում կրթության համաթիվը կազմվում է հիմնականում գրագիտության ու հանրակրթության ոլորտ մինչև 15 տարեկան բնակչության ընդգրկվածության ծավալներով, ապա հիմա դրանց ավելացել է նաև կրթության շարունակականության ու նաև ուսման տարիների տվյալները: Սա արդեն փաստորեն վերաբերում է նաև ավագ դպրոցական և բուհական կրթության ցուցանիշներին: Այս ոլորտներում դեռ բավական լուրջ խնդիրներ կան, քանի որ Հայաստանի նույնիսկ մինչճգնաժամային տվյալները բավական ցածր են: Նկատենք, որ չնայած բուհերում ընդգրկվածության մեծ ծավալների մասին տարածված խաբուսիկ կարծիքին, իրականում Հայաստանը ունի բավական ցածր ցուցանիշներ: Ասենք, օրինակ համեմատած Կենտրոնական և Արևելաեվրոպական երկրների (ԿԱԵ), որոնցում բուհական կրթության ոլորտ ընդգրկվածությունը կազմում է 43 %, Հայաստանում նույն ցուցանիշը 26 % է: Իդեալ, բավական ցածր է նաև նախադպրոցական ոլորտ ընդգրկվածության ցուցանիշը: Երկրների նշված խմբի 50.1 % ցուցանիշի դիմաց Հայաստանի ցուցանիշը կազմում է ընդամենը 27.5 %: Եվ այժմ, նախադպրոցական կրթության մասին նոր օրենքը հույսեր է ներշնչում որ ոլորտում կնկատվի առաջընթաց: Սա կարևոր է այն առումով որ բուհական կրթության հետ միասին նախադպրոցական կրթությունը ազդում է կրթության տևողության ու շարունակականության ցուցանիշների վրա, դրական ազդելով մարդկային զարգացման վրա ընդհանրապես:

Չնայած աղքատ ու անապահով խավերի համար կրթության ոլորտում ճգնաժամի հետևանքում առաջացած լուրջ բարդություններին, այնուամենայնիվ տնային տնտեսությունների համար երեխաների կրթական կարիքները հոգալը համարվում է կարևորագույն խնդիրը: Շատ ընտանիքներ ծայրահեղ լարումների միջոցով փորձում են լուծել գոնե նվազագույնը: Հարցումները ցույց են տալիս, որ ընտանիքները կրթական կարիքների համար անհրաժեշտ ծախսերը հոգալու համար դիմում են նույնիսկ այնպիսի ծայրահեղ քայլերի, ինչպես ասենք սննդի, հագուստի ջեռուցման և այլ առաջնային կենցաղային պահանջմունքների կրճատումն է մինչև ծայրահեղ նվազագույն ու նման խնայողությունների հաշվին կրթական ծախսերի համար հատկացումների իրականացումը: Հաճախ կիրառվող քայլերից է նաև տան այս կամ այն ապրանքի վաճառքի (գյուղական ընտանիքներում հաճախ խոշոր եղջերավոր անասունի վաճառքի) կամ էլ պարտքերի միջոցով երեխաների ուսման

խնդիրների լուծումը: Լինում են դեպքեր երբ այդ ծախսերն իրականացվում են բարեկամների ու հարազատների օժանդակությամբ: Որոշ դեպքերում նաև կրթական ծախսերի հետ կապված հոգսերի թեթևացմանը նպաստում է բարեգործական կամ հասարակական այս կամ այն կազմակերպությունը: Ըստ փորձագիտական տվյալների հարցին պատասխանած փորձագետների 33.3 %-ը գտնում է, որ այդ կարիքները հոգում են աշխատավարձի, 66.7 %-ը՝ սոցիալական նպաստների, 31.2 %-ը՝ արտերկրից ստացվող օժանդակության, 72.9 %-ը՝ պարտքերի, 68.8 %-ը՝ ընտանիքի առաջնային կարիքների վրա կատարվող ծախսերը կրճատելու հաշվին:

**նկար 6.** Ըստ Ձեզ, որո՞նք են այն հիմնական ֆինանսական աղբյուրները, որոնց հաշվին անապահով ընտանիքները հոգում են երեխաների կրթական կարիքները (կարող եք նշել 3 ամենակարևորները)



Եթե փորձենք դասակարգել վերլուծության այս պարագրաֆում ներկայացված հիմնախնդիրները, ապա կարելի է առանձնացնել հետևյալ խմբերը.

- Ճգնաժամի հետևանքում առաջացած ուղղակի հիմնախնդիրներ, որոնք առաջացել են աղքատ ու անապահով տնային տնտեսությունների եկամուտների կրճատման ու ծախսերի աճի հետևանքում: Դրանք վերաբերում են կրթության հետ կապված ամենաառաջնային կարիքների բավարարման անկարողությանը,
- Համակարգային հիմնախնդիրներ կապված վարչարարական ու կոռուպցիոն երևույթների հետ, որոնք լրացուցիչ ֆինանսական ծանրաբեռնվածություն են ստեղծում հատկապես աղքատների ու անապահովների համար: Հատկապես, դա արտահայտվում է ճգնաժամային պայմաններում լրացուցիչ ծախսեր պահանջելու դեպքում, բացասաբար ազդելով ընդհանրապես աղքատ ու անապահով տնային տնտեսությունների գոյատևման ռազմավարության վրա ու էլ ավելի

սրելով ճգնաժամի հետևանքում տնային տնտեսության առանց այն էր լարված սոցիալական վիճակը,

- Համակարգային հիմնախնդիրներ, կապված տարածքային ու մարզային անհամաչափ զարգացվածության հետ, ինչը բացասաբար է անդրադառնում հատկապես աղքատ ու անապահով ընտանիքների երեխաների կրթության որակի վրա, ովքեր ֆինանսապես ի վիճակի չեն լինում կրթություն ստանալ ավելի բարձր վարկանիշ ունեցող մայրաքաղաքային բուհերում,
- Անհամաչափ զարգացումը ազդում է նաև երեխաների ԲՈՒՀ ընդունվելու մեկնարկային հնարավորությունների ու ընդհանուր զարգացման վրա, քանի որ չափազանց մեծ է տարբերությունը գյուղական, մարզային, Երևանի արվարձանային, Երևանի կենտրոնի և վճարովի դպրոցների միջև,
- Համակարգային հիմնախնդիրներ, որոնք ուսման վարկերի տրամադրման մեխանիզմների ծայրահեղ անհարմարության պատճառով, փաստորեն նորից առավել ծանր վիճակում են դնում սոցիալապես անապահովների որակյալ կրթություն ստանալու ու մարդկային զարգացման հնարավորությունները,
- Լրացուցիչ հիմնախնդիր է դարձել սոցիալապես անապահովների ավագ դպրոցներում կրթությունը շարունակելու խնդիրը և ըստ մեր հետազոտական տվյալների ծայրահեղ աղքատների ու աղքատների ընդգրկվածությունը առաջիկա տարիներին կարող է նվազել:

Այսպիսով կարելի է ասել, որ ելնելով վերը նկարագրած հիմնախնդիրներից ու կարիքների սրվածության պատկերից, կրթական ոլորտում անհրաժեշտություն կա իրականացնելու ինչպես առաջացած իրավիճակային սուր խնդիրների լուծմանն ուղղված ծրագրեր, այնպես էլ առավել հիմնարար ու համակարգային միջոցառումներ: Այս խնդիրների քննարկումը և համապատասխան առաջարկների մասին ավելի մանրամասն կխոսվի հետազոտության վերջում տրվող առաջարկությունների բաժնում:


#### *1.4. Աղքատ ու անապահով խավերի առողջապահական կարիքների նկարագիրը և դրանց պատճառները*

Առողջապահական կարիքների ուսումնասիրությունը մեզ համար հատուկ նշանակություն ունի, քանի որ առողջությունը մարդկային զարգացման հիմնարար պայմաններից է: Չնայած, *Մարդկային զարգացման համաթվում* գլխավոր ցուցանիշը համարվում է կյանքի տևողությունը, սակայն միաժամանակ նկատի է առնվում, որ մարդու հնարավորությունների ու ազատությունների ընդլայնման տեսանկյունից կարևոր է ոչ միայն կյանքի տևողությունը, այլ առողջ ընթացքը, քանի որ հիվանդությունները խոչընդոտում ու սահմանափակում են մարդու ինքնարտահայտման ու ինքնաիրացման հնարավորությունները: Այս առումով, առողջական կարիքների բավարարումը հիմնարար նշանակություն ունի մարդկային զարգացման համար և *առողջապահական համակարգի խնդիրը ոչ միայն հիվանդությունների բուժումը պետք է լինի, այլ առաջին հերթին դրանց կանխարգելումը, քանի որ հիվանդությունն ինքն արդեն իսկ հնարավորության սահմանափակում է*: Իսկ եթե նկատի ունենանք ծանր հիվանդությունը կամ մարդու կյանքի ու գործունեության վրա հետևանքներ թողնող հիվանդությունները, ապա այս

դեպքում հիվանդությունների կանխարգելումը շատ ավելի առաջնային նշանակություն է ստանում:


Իրականացված հետազոտությունում առողջապահական հիմնախնդիրների ուսումնասիրության չափանիշները դիտարկվել են հենց մարդկային զարգացման տեսանկյունից: Այսինքն, ուսումնասիրվել են սոցիալապես անապահով խավերի համար առողջապահական կարիքները հոգալու պրոբլեմները, ճգնաժամի ազդեցությունը դրանց վրա: Ճգնաժամից հետո առողջապահական հիմնախնդիրների վերաբերյալ գերիշխող փորձագիտական կարծիքն այն է, որ առկա սոցիալապես անապահովների համար առողջապահական ծառայություններից օգտվելու մատչելիության անկում առկա է, բայց ոչ զգալիորեն՝ 43.8 %, 35.4 %-ն էլ գտնում է, որ մատչելիության անկումը համարում է զգալի և միայն 16.7 %-ն է համարում, որ ազդեցություն ընդհանրապես չկա:

**Նկար 7.** Նկատվում է արդյո՞ք ճգնաժամի պատճառով առողջապահական ծառայությունների մատչելիության աստիճանի անկում




Ըստ փորձագետների, առողջապահության մատչելիության անկման հետևանքում մարդիկ հաճախ դիմում են բժշկի ծայրահեղ վիճակներում: Նման կարծիքի են հարցմանը մասնակցածների 70.0 %-ը: Փորձագետների 10.0 %-ի կարծիքով էլ սոցիալապես անապահովները ընդհանրապես են խուսափում դիմել առողջապահական հիմնարկներ: Ֆոկուս խմբային հարցումները նույնպես հաստատում են փորձագիտական տվյալները: Ըստ այդմ, մարդիկ հաճախ ունենալով տարբեր կարգի առողջապահական խնդիրներ, խուսափում են դիմելու բժշկի և դիմում են միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, երբ արդեն հիվանդի վիճակն էլ շատ ավելի խորացած է լինում: Նման իրավիճակներում բուժման գործընթացն էլ ավելի երկար ու ծախսատար է լինում և դրա արդյունավետությունը հաճախ հիվանդների սխալ վարքի հետևանքում խիստ տուժում է: Տարածված է նաև այն կարծիքը (12.5 %), որ մարդիկ դիմում են ախտորոշման, սակայն դրանից հետո խուսափում են բժշկի դիմելուց և կամ փորձում են տնայնագործական եղանակներով ինքնուրույն լուծել այդ հարցը, իսկ երբեմն էլ դիմում են ժողովրդական բուժակներին ու հեքիմներին, քանի որ դա ավելի էժան ու մատչելի է: Սակայն, բնական է, որ լուրջ հիվանդությունների դեպքում նման առողջապահական վարքը հանգեցնում է հիվանդության էլ ավելի ծանրացման, բարդությունների առաջացման ու դրա հետագա բուժման ավելի դժվարացման:

**Նկար 8.** Եթե նկատվում է առողջապահական ծառայությունների մատչելիության անկում, ապա ինչպես է դա արտահայտվում սոցիալապես անապահովների վարքում




Ճգնաժամի հետևանքում առողջապահական ծառայությունների մատչելիության անկման հիմնական պատճառը ըստ փորձագիտական պատասխանների հետևյալներն են՝ ֆինանսականը՝ 92.1 %, տեղեկատվականը՝ 57.9 % և վարչարարականը՝ 42.1 %: Երբեմն նաև նման պատճառ է համարվում հասարակական-մշակութային գործոնը՝ 23.7 %: Մասնավորապես, բացասական է համարվում, բնակչության մեջ բավականին տարածված, այսպես կոչված, «դանակը ոսկորին հասնելուց» հետո բժշկի դիմելու վարվելակարգը: Սրա պատճառով հաճախ ստացվում է, որ հիվանդությունը ոչ միայն ավելի ծախսատար է լինում, այլ նաև ավելի խորը հետևանքներ է թողնում մարդու առողջության ու կյանքի տևողության վրա:

**Նկար 9.** Ձեր կարծիքով ի՞նչն է սոցիալապես անապահով խավերի համար առողջապահական ծառայություններից օգտվելու մատչելիության անկման պատճառը (կարող եք նշել մինչև 3 պատասխան)



Ինչ վերաբերում է ճգնաժամի հետևանքում սրված առողջապահական ծառայությունների ըստ ոլորտների մատչելիության խնդրին, ապա հարցմանը մասնակցած փորձագետների 83.3 %-ը գտնում է որ սոցիալապես անապահովների համար առավել սրված ոլորտը հիվանդությունների ու ստացիոնար բուժումն է, 62.5 %-ը՝ ախտորոշման, իսկ 83.3 %-ը՝ դեղորայքի ձեռք բերման: Փորձագետների մեծ մասը դրական գնահատելու առաջնային առողջապահության ոլորտի ծառայությունները և միայն 12.5 %-ն է դրա վերաբերյալ բացասաբար արտահայտվել:


**նկար 10.** Ձեր կարծիքով հատկապես ո՞ր բնույթի առողջապահական հիմնախնդիրներն են սրվել սոցիալապես անապահովների համար (կարող եք նշել մինչև 3 պատասխան)



Իհարկե, այստեղ նույնպես կան որոշ հիմնահարցեր, սակայն ոլորտի դերակատարությունը բնակչության մեծ մասի համար հիմնականում համարվում է մատչելի: Ինչ վերաբերում է հիմնախնդիրներին, ապա դա կապված է *ա/ոչ* մեծ ստվերային վճարումների հետ և *բ/*առողջապահական ծառայության որակի հետ կապված տարածքային անհամաչափության հետ: Վերջինս հատկապես սուր է արտահայտված մարզերում:

Բավական ցածր է առողջապահական ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ ծախսեր իրականացնելու բնակչության կարողությունները: Ինչպես փորձագիտական, այնպես էլ ֆոկլորս խմբային տվյալները ցույց են տալիս, որ բնակչության մեջ մեծամասնություն են կազմում այնպիսի սոցիալական խմբերը, որոնց ինքնուրույն կերպով առողջապահական ծախսերը հոգալու կարողությունը չափազանց ցածր է: Առողջապահական ծառայությունների դիմաց սոցիալապես անապահով խմբերի ծախսերի աղբյուրները ըստ փորձագետների պատասխանների 68.8 %-ի հոգում են պարտքերի միջոցով, 50.0 %-ի կարծիքով արտերկրից ստացվող դրամական օժանդակության, 16.7 %-ի կարծիքով բարեկամների օգնությամբ: Որոշներն էլ աղբյուրների թվում նշում են բարեգործական հաստատությունների (16.7 %), հասարակական կազմակերպությունների (8.3 %), մասնավոր ձեռներեցների օժանդակությունը (6.2 %):

**նկար 11.** Ըստ Ձեզ, որո՞նք են այն հիմնական աղբյուրները, որոնց հաշվին անապահով ընտանիքները հոգում են առողջապահական կարիքները (կարող եք նշել 3 ամենակարևորները)



Առանձին ուշադրության է արժանի այն կարծիքը համաձայն որի առողջապահական ծառայություններից օգտվելու ծախսերը հոգում են ընտանիքի առաջնային անհրաժեշտության այլ ծախսերի կրճատման հաշվին: Այդ կրճատումները լինում են հիմնականում սննդի ու առաջնային այլ կարիքները սահմանափակելու հաշվին, որը վերջին հաշվով նորից բացասաբար է անդրադառնում առողջության վրա: Մակայն նման մարտավարությունը թույլ է տալիս որոշ առումով մեղմել ընտանիքի անդամների ծայրահեղ առողջապահական հիմնախնդիրը: Երբեմն, ընտանիքի անդամների առողջապահական ծայրահեղ իրավիճակների լուծմանը ներգրավվում են նաև դպրոցահասակ երեխաները:

*Մեր համագյուղացիներից մեկը, որն այստեղ է տեղափոխվել քաղաքից (նկատի ունի Գյումրին), այնտեղ բնակարան ու ապրուստի միջոց չունենալու պատճառով, շատ ծանր վիճակում է: Մարդը պատրաստ է գյուղում ցանկացած աշխատանքն անի, բայց դե գյուղում ինչ գործ կա, որ փող աշխատի: Տղան էլ դպրոցական տղա է, հոր հետ հավասար աշխատում է, չորանություն է անում, որ հիվանդ մորը պահեն:*

Տղամարդկանց ֆոկլուս խումբ, գ. Վահրամաբերդ, Շիրակի մարզ

Երբեմն, առողջապահական ծառայություն ստանալու անմատչելիությունը պարզապես ողբերգական իրավիճակների ու տնային տնտեսության ապագայի համար կործանարար հետևանքներ է ունենում:




Ամուսինս աշխատում էր Ռուսաստանում: Երեխան էլ տեսողության անկման պրոբլեմ ուներ: Լավ էր, ոչինչ, ամուսինս վաստակում էր այնքան, որ կարողացանք սկսել երեխայի բուժումը: Բուժումը Երևանում էին իրականացնում և շաբաթական պարբերաբար գնում էինք Երևան գալիս: Բուժման երկու փուլն արդեն անցել էինք, երբ ամուսնուս մոտ էլ առողջական պրոբլեմներ բացահայտվեցին: Գլխուղեղի ուռուցք են հայտնաբերել, որը վիրահատման միջոցով է հնարավոր միայն բուժել: Ամուսինս, այդ պատճառով կորցրել է աշխատունակությունը և այլևս չի կարողանում մեկնել Ռուսաստան վաստակելու ու հիմա չենք իմանում ինչ է լինելու մեր ապագան: Ոչ ամուսնուս ենք ի վիճակի բուժել, ոչ երեխայի բուժումը շարունակել: Ոչ մի տեսակի սոցիալական ցուցակներում էլ չենք մտնում, որ անվճար բուժօգնության դիմենք: Չնայած, որ մտնեինք էլ, էլի մեր պրոբլեմը չէր լուծվի, քանի որ միայն երեխայի հետ պարբերաբար Երևան գնալը, մի քանի օր գիշերելն ու վերադառնալն արդեն մեր համար մատչելի չի: Բայց բժիշկներն էլ ասում են, որ եթե բուժման երրորդ ու չորրորդ փուլերը երեխան չանցնի, կարող է նույնիսկ տեսողությունը կորցնելու վտանգ առաջանա:

Կանանց ֆոկուս խումբ, գյուղ Աբորի, Լոռու մարզ

Նկատենք, որ նշված հիմնախնդիրներին զուգահեռ Հայաստանի առողջապահական համակարգը փորձագետների զգալի մասի՝ 66.7 %-ի կարծիքով հիմնականում լուծում է առաջացած հիմնախնդիրները, 29.2 %-ի կարծիքով լիովին է լուծում հիմնախնդիրները: Փորձագետների 4.2 %-ն էլ կարծում է, որ ՀՀ առողջապահական համակարգը լուծում է առաջացած հիմնախնդիրները մասնակիորեն: Այն, որ փորձագետներից ոչ մեկը համաձայն չէ, այն կարծիքին, որ այն ընդհանրապես չի լուծում առաջացած պրոբլեմները, իրոք թույլ է տալիս ասելու, որ առողջապահական համակարգը ունի լուրջ թերություններ, բայց այն թույլ է տալիս սոցիալապես անապահովներին ստանալ գոնե նվազագույն բուժօգնություն: Պատահական չէ, որ ըստ փորձագիտական պատասխանների 50.0 %-ի սոցիալապես անապահովների առողջապահական ծախսերը հոգալու աղբյուրների մեջ նշվում են պետական ծրագրերը:

**նկար 12.** Ինչպե՞ս կգնահատեք սոցիալապես անապահովների առողջապահական կարիքների նկատմամբ պետական ներկայիս քաղաքականությունը



Սակայն, միևնույն ժամանակ իրականացվող առողջապահական ծրագրերն ունեն զգալի թերություններ, որոնք թույլ չեն տալիս սոցիալապես անապահովներին ստանալ որակյալ առողջապահական ծառայություններ: Այդ հիմնախնդիրներն հիմնականում կապված են վարչարարական պրոբլեմների, կոռուպցիոն ու ստվերային վճարումների արատավոր մեխանիզմների, բնակչությանը իրականացվող ծրագրերի ու դրանցից օգտվելու մեխանիզմների մասին տեղեկատվության պակասի ու իրազեկման մեխանիզմների թերությունների, մարզային ու տարածքային անհամաչափությունների խնդիրներին:

Այսպիսով, եթե ընդհանրացնենք, ապա կարելի է առանձնացնել աղքատների ու անապահովների կարիքների հետևյալ խմբեր.

- Կանխարգելիչ առողջապահական ծառայությունների կարիք
- Ախտորոշիչ առողջապահական ծառայությունների կարիք
- Հիվանդային որակյալ բուժում ստանալու կարիք
- դեղորայքի ձեռք բերման կարիք

Ինչ վերաբերում է համակարգային բնույթի խնդիրներին, ապա դրանց թվում կարելի է առանձնացնել.

- Մարզային ու տարածքային առողջապահական ծառայությունների որակական անհամաչափության հաղթահարում
- Որակյալ հիվանդանոցային բուժօգնությունը և դեղորայքի մատչելիությունը խոչընդոտող վարչարարության պարզեցում և կոռուպցիա առաջացնող մեխանիզմների վերացում
- Սոցիալական նպաստառուների ցուցակներում չմտնող, սակայն իրականում նման ծանր սոցիալական պայմաններ ունեցող խմբերին առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացում:

## **2. Ճգնաժամի հետևանքների ազդեցությունը աղքատ ու անապահով խավերի մարդկային զարգացման վրա**

### *2.1. Մարդկային զարգացման կոնցեպցիան և դրա կարևորությունը աղքատ ու անապահով խավերի համար*

Հայաստանում աղքատության հաղթահարման քաղաքականությունը, ինչպես նաև կառավարության ողջ քաղաքականությունը կառուցված է *տնտեսական զարգացման հայեցակարգի* վրա: Այս հայեցակարգի հիմնական էությունն այն է, որ որպես զարգացման նպատակ դիտվում է տնտեսական աճի բարձր տեմպերի ու տնտեսական զարգացման ապահովումը: Ինքնին այս խնդիրները անուղղակիորեն բերում են մարդկային բարեկացությունների աճին: Սակայն, ինչպես ցույց է տալիս զարգացման այս հայեցակարգով առաջնորդված և ճանապարհ անցած երկրների փորձը, տնտեսական զարգացումը ապահովում է միայն նյութական բարեկեցության աճ, սակայն շատ հաճախ սահմանափակում է մարդկային զարգացումը: Այսինքն, տնտեսական զարգացման հայեցակարգի շրջագծում, չնայած և կարևորվում է մարդու կրթություն ստանալու, առողջ ապրելու ու զարգանալու հնարավորությունների աճը, սակայն միևնույն է դրա նպատակը տնտեսության համար բարձր արդյունավետություն ունեցող աշխատուժի ձևավորումն է: Մարդկային զարգացման

կոնցեպցիան, որն ի հայտ եկավ 1990-ականների սկզբին, փոխեց մոտեցումը զարգացման խնդրին և զարգացման նպատակը սկսեց համարել մարդու հնարավորությունների ու ազատությունների աճը: Իսկ տնտեսությունն ու տնտեսական աճը նույնպես սկսեց կարևորել այս տեսանկյունից: Այս առումով առաջին հայացքից ստացվեց մի տարօրինակ իրավիճակ, երբ տնտեսության նպատակը ոչ թե տնտեսական արդյունքներն են, այլ մարդկային ազատությունների ու հնարավորությունների աճը: Սակայն, հատկանշական է, որ նման կոնցեպտուալ մոտեցումը ավելի լայն հնարավորություններ տալով մարդուն իր ստեղծագործականության բացահայտման ու իրացման առումով, տնտեսական տեսանկյունից էլ շատ ավելի մեծ արդյունավետություն ունի, քան տնտեսական զարգացման կոնցեպցիան:

Մարդկային զարգացումը, որպես քաղաքականություն ունի իր չափորոշիչներն ու ինդիկատորները: Դրանցում առաջնային նշանակություն է տրվում.

- կրթությանը, որպես մարդու ստեղծագործական ունակությունների ու հմտությունների բացահայտումն ու զարգացումն իրականացնող ոլորտի,
- առողջապահությանը, որպես մարդու հնարավորությունների ու ազատությունների ձևավորման ու ռեալիզացման հիմնարար պայմանի,
- եկամուտներին, որպես մարդու հնարավորությունների ու ազատությունների նյութական հիմքի ձևավորման պայմանի:

Կան նաև այլ չափորոշիչներ, որոնք նշվածի համեմատ համարվում են ածանցյալ և չեն մտնում այս վերլուծության թեմատիկ շրջագծի մեջ և որոնց այդ պատճառով չենք անդրադառնում:

Այսպիսով, եթե մարդկային զարգացման կոնցեպցիայի տեսանկյունից փորձենք գնահատել ՀՀ-ում իրականացվող սոցիալական քաղաքականությունը, ապա կարելի է ասել, որ դրա արդյունավետությունը խիստ ցածր է: Եվ ընդհանրապես աղքատների ու անապահովների հանդեպ ՀՀ-ում իրականացվող սոցիալական քաղաքականությունը մարդկային զարգացման տեսանկյունից ունի հետևյալ թերությունները.

- Աղքատներին ու անապահովներին բնութագրող չափորոշիչները: Այս չափորոշիչներն ինքնին կառուցված են այնպես, որ թույլ են տալիս բացահայտել ոչ թե այն խմբերին, ում կյանքի սոցիալական վատթար պայմանները անհնարին են դարձնում տնային տնտեսությունների անդամների մարդկային զարգացումը, այլ հումանիտար աղետի եզրին գտնվող տնային տնտեսություններին: Ի դեպ դրանց անկատարությունն այն աստիճան է, որ քիչ չեն դեպքերը երբ սոցիալական նպաստառուների ցուցակներից դուրս են մնում նաև ծայրահեղ աղքատ վիճակում գտնվող տնային տնտեսությունները,
- Աղքատներին ու անապահովներին ցուցաբերվող սոցիալական օժանդակության ծրագրերն ու նպաստները հիմնականում թույլ են տալիս ձևավորել սովահարության չենթարկվելու նվազագույն հնարավորություն: Սոցիալական նպաստների քաղաքականությունը ուղղված չէ աղքատ ու անապահով խավերի համար մարդավայել ապրելակերպի նվազագույնը ապահովելուն: Այն, ոչ միայն չի ներառում կրթական ու զարգացման

խնդիրներին ուղղված ծրագրեր, այլ նաև մեխանիզմների անկատարության պատճառով չի երաշխավորում որակյալ առողջապահության մատչելիություն:

Այսինքն, ՀՀ-ում իրականացվող սոցիալական քաղաքականության ծրագրերը չեն երաշխավորում դրանց շահառուների ոչ եկամտային, որ կրթական և ոչ էլ առողջապահական նվազագույնը, որն անհրաժեշտ է մարդկային զարգացման համար, ուստի դրանք արմատական ու սկզբունքային վերանայման կարիք ունեն, ինչը կարծում ենք, պետք է իրականացվի ոչ միայն ոլորտային քաղաքականությունների, այլ երկրի զարգացման ռազմավարական փաստաթղթի՝ Կայուն զարգացման ծրագրի մակարդակով:


## *2.2. Կրթական կարիքների նկարագիրը մարդկային զարգացման տեսանկյունից*

Վերն արդեն ներկայացրել ենք ճգնաժամի ազդեցության նկարագիրը սոցիալապես անապահովների կրթական կարիքների վրա: Այս պարագրաֆում մենք կցանկանայինք քննարկել առաջացած կրթական հիմնախնդիրները երեխայի մարդկային զարգացման տեսանկյունից: Ինչպես ցույց են տալիս իրականացված հետազոտության տվյալները Հայաստանում կրթական համակարգը ինքնին ունի կայացման ու մարդկային զարգացման տեսանկյունից վերակառուցվելու անհրաժեշտություն: Այսինքն կրթական համակարգում առկա են համակարգային խնդիրներ, որոնք ձևավորում են համընդհանուր բնույթի պրոբլեմներ ողջ հանրապետության տարածքում: Մասնավորապես դա վերաբերում է.

- նախադպրոցական, հանրակրթական ու ավագ դպրոցական մեթոդաբանության, ծրագրերի ու քաղաքականության թիրախների վերանայման հիմնախնդիրն
- կրթության բոլոր մակարդակներում առկա մարզային ու տարածքային անհամաչափությունների հիմնախնդիրներին
- երեխայի ունակությունների բացահայտման ու զարգացման հնարավորությունների սահմանափակությանը ու որոշ բնակավայրերում նույնիսկ դրանց բացակայությանը:

Ներկայացված համընդհանուր, հանրապետական ու համակարգային բնույթի հիմնախնդիրներին զուգահեռ, ճգնաժամի հետևանքում առաջացած հիմնախնդիրները խորացրել են աղքատ ու անապահով խավերի մարդկային զարգացման հետ կապված կարիքներ: Պատահական չէ, որ փորձագետների հիմնական մասը գտնում է, որ ճգնաժամի հետևանքում սրված կրթական հիմնախնդիրները այս կամ այն չափով ազդել են սոցիալապես անապահովների մարդկային զարգացման վրա: Այսպես, հարցմանը մասնակցած փորձագետների 62.5 %-ը այն կարծիքին է, որ դրա ազդեցությունը շատ էական է եղել, 31.2 %-ը չնայած մասնակի, բայց գտնում է որ ազդեցություն ունեցել է և միայն 4.2 %-ն է գտնում, որ ճգնաժամի հետևանքում առաջացած կրթական հիմնախնդիրները չեն ազդում սոցիալապես անապահովների մարդկային զարգացման վրա:

**Նկար. 13.** Ձեր կարծիքով ազդում են արդյո՞ք առաջացած կրթական հիմնախնդիրները երեխայի մարդկային զարգացման ու ապագայի վրա



Ազդեցության որակական առանձնատկությունների պատկերը ամբողջացվում են իրականացված հետազոտության որակական այլ տվյալներով: Ըստ այդմ, կարելի է ասել, որ կրթություն ստանալու համար այնպիսի հիմնարար կարիքների անբավարարությունը, ինչպիսիք են դասագրքերը, գրենական պիտույքները, դպրոց հաճախելու համար անհրաժեշտ հագուստը ու դասուսուցման գործընթացին երեխայի ֆիզիկապես ընկալունակ վիճակ ձևավորելուն անհրաժեշտ սնունդը, էական ազդեցություն են ունենում երեխայի մոտ հանրակրթական ոլորտում արդեն մեկնարկային մրցունակ մշակութային կապիտալի ձևավորման համար, որը կարող է նպաստել նրա հնարավորությունների ու ազատությունների ընդլայնմանը:

Կրթական ներկայիս պայմանները ոչ միայն երեխայի մոտ հնարավորությունների ու ազատությունների ընդլայնման ելակետային ունակություններ չեն ձևավորում, այլ հաճախ նաև ձևավորում են տարբեր տեսակի հոգեբանական բարդույթներ, գցում նրա կրթություն ստանալու կորուվը:

*Աղքատ ու անապահով երեխաները նաև ամենից զրկվածներն են լրացուցիչ կրթություն ստանալու նպատակով:* Խոսքը վերաբերում է արտադասարանական խմբակների ու պարապմունքների մասնակցության սահմանափակությանը: Այս խնդիրն ունի մի քանի կողմ: Նախ, այդ խմբակների հիմնական մասը վճարովի է ու աղքատ ու անապահով ընտանքիների երեխաների մասնակցությունը ապահովելը պահանջում է ֆինանսական հատուկ աջակցություն, երկրորդ, հաճախ նման խմբակներ բնակավայրում չլինելու պատճառով անհրաժեշտ է լինում նաև լուծել աշխարհագրական բնույթի հիմնախնդիրները հաղթահարելու հարցը: Ասենք օրինակ, ստեղծել նման պարապմունքները տարբեր բնակավայրերում իրականացնելու շրջիկ խմբակներ, որոնք նման արտադասարանական խմբակների կազմակերպում կիրականացնեն բնակավայրի կրթահամալիրի հետ համագործակցությամբ, երբ դպրոցը կտրամադրի համապատասխան շենքային ու դասարանային պայմաններ, իսկ **շրջիկ արտադասարանական պարապմունքների ծրագիրը** կապահովի տվյալ բնակավայր համապատասխան մասնագետների այցելությունն ու վճարումը:

*Խիստ սահմանափակ է նաև որակյալ կրթություն ստանալու նպատակով այս խավերի տեղաշարժման հնարավորությունները: Խոսքը վերաբերում է նրան, որ եթե այլ խավերի երեխաները կարողանում են անհրաժեշտության դեպքում ընտրել ոչ թե տարածականորեն մոտ, բայց կրթության ոչ պատշաճ որակի ծառայություններ մատուցող կրթական հաստատություն, ապա այս խավերի երեխաները հաճախ կրթահամալիրի ընտրության դեպքում առաջնորդվում են ոչ թե որակով, այլ տարածական հասանելիության հատկանիշով:*

Առկա է նաև դպրոցների միջև սոցիալական շերտավորման գործընթաց, որն արտահատվում է մարզերում այսպես կոչված «Էլիտար» դասարանների, իսկ Երևանում «Էլիտար» դպրոցների սովերային գոյության փաստով: Ըստ մեր որակական հարցումների աղքատ ու անապահով խավերի երեխաները համարյա ամբողջովին դուրս են մղված Երևանի կենտրոնի այսպես կոչված «Էլիտար» դպրոցներում սովորելու հնարավորությունից:

Կրթության ոլորտում աղքատ ու անապահով խավերի մարդկային զարգացման տեսանկյունից պրոբլեմային է ***նաև կրթության տևողության չափի ու կրթության շարունակականության հնարավորության ցուցանիշների*** միջև առկա տարբերությունը հասարակության առավել հարուստ խավերի ու ընդհանարապես միջին ցուցանիշների համեմատ: Հատկապես, կրթության ոլորտի այս խնդիրը, մարդկային զարգացման տեսանկյունից խիստ կարևոր նշանակություն ունի և ճգնաժամի հետևանքում բևեռացումը կրթության տևողության ու շարունակականության ցուցանիշների միջև խորացման միտում ունի: Հակաճգնաժամային ծրագրերի ու կրթության ոլորտում վարվող պետական քաղաքականության ու ծրագրերի համար այս հիմնախնդրի լուծմանը պետք է հատուկ նշանակություն տրվի: ***Առանձնապես կարևոր է բևեռացումը կանխելու ու նվազեցնելուն ուղղված կրթական ծրագրերի մշակումն ու իրականացումը:***

Այսպիսով, ամփոփելով այս պարագրաֆը կարելի է ասել, որ ճգնաժամի հետևանքում կրթական հիմնախնդիրները ոչ միայն սրվել են, այլ նաև խորացրել աղքատ ու անապահով խավերի երեխաների մարդկային զարգացման պրոբլեմները, որոշ դեպքերում դրա հնարավորությունը իջեցնելով ծայրահեղ նվազագույնի: Ուստի, անհրաժեշտություն կա հակաճգնաժամային ծրագրեր իրականացնելու ուղղված ոչ միայն աղքատ ու անապահով խավերի կրթության նվազագույն կարիքների բավարարմանը, որոնք կապված են կրթության մատչելիությունը ապահովելուն, այլ նաև՝ կրթության տևողության ու շարունակականության ՀՀ միջին չափանիշների ապահովումը:


### ***2.3. Առողջապահական կարիքների նկարագիրը մարդկային զարգացման տեսանկյունից***

Վերը ներկայացված առողջապահական կարիքների ու դրանց բավարարման դժվարությունների պատկերը թույլ է տալիս ասել, որ աղքատ ու անապահով խավերի միջավայրում առողջապահական կարիքների բավարարման ունակությունները չափազանց ցածր են: Դրանք հիմնականում կապված են ինչպես ֆինանսական բարդությունների հետ, այնպես էլ իրազեկվածության, ծառայություններից օգտվելու

մշակույթի և վարչարարության անկատարության հետ: Ստեղծվածի հետևանքում ձևավորվել է մի իրավիճակ, երբ եթե անապահով ու աղքատ խավերի մարդիկ հիվանդանում են որևէ լուրջ հիվանդությամբ, ապա դրա որակյալ բուժման հնարավորությունը խիստ ցածր է: Այդ տնտեսությունների համար ծանր հիվանդությունները հաճախ ունենում են խորը բացասական հետևանքներ մարդու կյանքի տևողության ու որակի վրա: Աղքատ ու անապահով տնտեսություններում անցկացրած մեր դիտարկումները, այցելությունները, հիվանդ անդամների հետ հաղորդակցումը և վերջապես ֆոկուս խմբային հարցումները հաճախ ձևավորում են խիստ վատատեսական սպասելիքներ այդ խավերի առողջական կարիքների բավարարման հնարավորությունների աճի ու հեռանկարների առումով: Երբեմն, այս ընտանիքներում առողջապահական կարիքների բավարարման հետ կապված անելանելիության վիճակն այնքան խորն է, որ թույլ է թե Հայաստանում այդ խնդիրներն ընդհանրապես լուծելի չեն: Չնայած սոցիալապես անապահովների համար պետպատվերի շրջանակում ապահովված անվճար առողջապահական ծառայության մատչելիությանը, փաստն այն է, որ մարդիկ հաճախ չեն ստանում իրենց առողջապահական կարիքի բավարարումը ու կամ մնում են կիսաբուժված վիճակում կամ ստիպված են լինում պարտքերի միջոցով իրենք լուծել իրենց առողջապահական կարիքը, անիմաստ համարելով պետպատվերի իրենց արտոնությունից օգտվելը: Նման իրավիճակներ հատկապես առաջանում են մարզերում, որտեղ համակարգի վարչարարական ու կոռուպցիոն խորընտոդներին գումարվում է նաև մարզային առողջապահության որակի զգալի ցածրությունը Երևանի հանդեպ:

Ճիշտ է պետական համակարգը հիմնականում լուծում է բնակչության առողջապահական պահանջումների նվազագույնը: Սակայն, առողջապահական համակարգի գլխավոր թերությունն այն է, որ **այն հիմնականում չի լուծում աղքատների ու անապահովների որակյալ բուժում ստանալու պահանջումները, ինչի հետևանքում, առողջապահական պրոբլեմները էական հետք են թողնում այս խավերին մարդկային զարգացման վրա**: Այս առումով նույնպես պատահական չէ, որ փորձագետների հիմնական մասը՝ 83.3 %-ը, գտնում է որ առաջացած առողջապահական հիմնախնդիրները ազդում են մարդու կյանքի որակի ու տևողության վրա:

**Նկար 14.** Ձեր կարծիքով ազդում են արդյո՞ք առաջացած առողջապահական հիմնախնդիրները մարդու կյանքի որակի և տևողության վրա



Հենց այն, որ նման մեծ թիվ են կազմում փորձագետների մեջ առողջապահական համակարգի ծառայությունների որակին մարդկային զարգացման տեսանկյունից անվստահ մոտեցողները, ցույց է տալիս, որ համակարգը լուրջ խնդիրներ ունի: Դա առաջին հերթին պայմանավորված է առողջապահության ինչպես ծառայությունների ցածր որակով, այնպես էլ այդ ծառայությունների սպասարկման վատ որակով: Հաճախ հենց առողջապահական որակյալ ծառայության անմատչելիությունը հանգեցնում է մարդկանց աշխատունակության կորստի ու մարդկային զարգացման հետընթացի:

*Ամուսինս, երկու տարի առաջ հիվանդացավ: Նյարդային համակարգի հետ կապված խնդիրներ ունի: Չի կարողանում երկար աշխատել, հոգնում է: Գնացինք մեր մոտի հիվանդանոց, բուժում նշանակեցին, բայց համարյա թե չօգնեց: Այսինքն, այնպես է, որ դեպի լավը չի գնացել: Դեղերով մի մակարդակի վրա ենք անընդհատ պահում: Ես մտածում եմ, որ եթե Երևան կարողանանք գնալ, հնարավոր է որ իրան բուժեն: Բայց այնպիսի վիճակում ենք, որ արդեն երկու տարի է էսօր-էգուց ենք անում, թե մի կոպեկ փող հետ զգենք գնանք Երևան ստուգվելու, բայց այդպես էլ չի հաջողվում: Միայն ես եմ աշխատում տանը ու այդ աշխատարժու էլ հազիվ սնունդին ենք հասցնում ու ամուսնուս դեղերին: Իսկի սնունդին էլ չենք հասցնում: Որ բարեկամներն ու հարևանները չօգնեն դա էլ չենք հասցնի: Այն է, որ սովից չենք մահանում: Բայց դե հյուծվում ենք: Իմ վիճակն ինչ է, նիհարել եմ չոփ եմ դառել: Այսպես որ գնա, ես էլ կհիվանդանամ: Այս մտքից սարսափում եմ: Որովհետև որ ես էլ հիվանդացա, ես չգիտեմ թե ով էդ մի կոպեկը կաշխատի: Անցած տարի գոնե նպաստ էինք ստանում, աշխատավարձիս հետ մի կերպ բավականացնում էր: Էս տարի ինչ է, թե աշխատավարձս բարձրացրեցին 31000-ից 35000 դրամ, նպաստից էլ զրկվեցինք:*

Կանանց ֆոկուս խումբ, ք. Ալավերդի

Եթե ամփոփենք, ապա կարելի է ասել, որ առողջապահության ոլորտում մարդկային զարգացման հետ կապված հիմնախնդիրները կապված են ախտորոշման, կանխարգելիչ ու ստացիոնար բուժման որակյալ առողջապահական ծառայությունների մատչելիության ցածր աստիճանով: Ինչ վերաբերում է ճգնաժամի առաջացրած կոնկրետ ազդեցությանը, ապա այն հիմնականում պայմանավորված է եկամուտների ու վաստակի աղբյուրների կրճատման հետ կապված ֆինանսական բնույթի բարդություններով, քանի որ որակյալ ծառայությունը կապված է բացառապես առձեռն վճարումներ իրականացնելու հետ:

#### *2.4. Մարդկային զարգացման և մշակութային կապիտալի ձևավորման հիմնախնդիրները աղքատ ու անապահով խավերի միջավայրում*

Մարդկային զարգացման համար հիմնարար նշանակություն ունի մարդու *մշակութային կապիտալը:*

*Մշակութային կապիտալը* դա մարդու ունակությունների, հմտությունների, գիտելիքների և դրանք կիրառելու կարողությունների այնպիսի մի ընդհանրություն է,



որը թույլ է տալիս դրա կրողին այն ներդնել հասարակական կյանքում և ստանալ *հավելյալ արժեք* մշակութային, սոցիալական և տնտեսական կապիտալների ձևով: Մշակութային կապիտալ ասելով նկատի չունենք այն, ինչ կապված է բուն մշակութային բնույթի երևույթների հետ, այլ՝ այն ինչը մարդ ձեռք է բերում իր դաստիարակության ու կրթության ընթացքում և որը կազմում է կյանքում նպատակներ ու խնդիրներ դնելու ու դրանց իրագործմանը տանող ստրատեգիաների ու տակտիկաների, կամ ավելի պարզ ասած ուղիների մշակման ու իրագործման ունակությունները:

Մշակութային կապիտալի որակները մարդուն հնարավորություն են տալիս մասնակցելու հասարակական կյանքում տեղի ունեցող տարբեր կարգի բարիքների ու արժեքների ստեղծմանն ու փոխանակությանը՝ որպես, ոչ միայն փոխանակության օբյեկտ, այլ նաև՝ սուբյեկտ: Այսինքն, մարդ որը ոչ միայն սպառում է այլոց ստեղծած բարիքները, այլև՝ մասնակցում հասարակական արժեք ու պահանջարկ ունեցող բարիքների ստեղծմանը: Եվ դա իրականացվում է կամ իր ունակությունները, գիտելիքներն ու հմտությունները ի սպաս դնելով հասարակական, տնտեսական, քաղաքական ու մշակութային հարթություններում ընթացող փոխանակային գործընթացներին, կամ էլ իր ունակությունների հիմքի վրա առարկայացված, այսինքն արտադրված բարիքների մատուցման միջոցով: Մշակութային կապիտալը հակում ունի փոխանակվելու և կապիտալի մի ձևից մյուս ձևերին՝ սոցիալական կամ տնտեսական կապիտալների փոխակերպվելու: Նկատի ունենք, քանի որ մշակութային կապիտալը շրջանառության ընթացքում հակված է ձևավորելու *հավելյալ արժեք*՝ նոր գաղափարների կամ այդ գաղափարների հիմքի վրա նոր ստեղծված բարիքների ձևով, ապա այն թույլ է տալիս նաև անհատին իր մշակութային կապիտալը (կամ դրա գործադրման շնորհիվ ձևավորված ապրանքներն ու բարիքները) փոխանակման գործընթաց հանել ու դիմացը ստանալ փող կամ այլ նյութական հարստություն, ինչպես նաև ձևավորել նոր կապեր, ունենալ կարգավիճակային աճ և այլն:

Մշակութային կապիտալի որակները որոշիչ դեր են խաղում այն կրող անհատի համար, պայմանավորելով նրա մասնակցության հնարավորությունը և չափը մշակութային, տնտեսական, քաղաքական ու հասարակական կյանքին: Մշակութային կապիտալի որակներով է պայմանավորված, թե տվյալ անհատը ինչքանով է մասնակցում տնտեսական, մշակութային, քաղաքական ու հասարակական կյանքում տեղի ունեցող.

- վերարտադրողական գործընթացներին
- զարգացման ու փոփոխման գործընթացներին:

Կախված անհատի մշակութային կապիտալի որակից, նա կարող է ոչ միայն վերարտադրել իր միջավայրը, այլ նաև փոխել այն, եթե այդ միջավայրն ու պայմանները խոչընդոտում են իր ինքնաիրացմանը, զարգացմանն ու բարեկացությանը: ***Այդ պատճառով էլ քաղաքացիական հասարակությունն ու ժողովրդավարությունը հնարավոր են դառնում միայն որոշակի մշակութային ու կրթական որակներով բնութագրվող հասարակություններում, որտեղ անհատի մշակութային կապիտալի որակները հնարավորություն են տալիս նրան հաղթահարելու այն հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են նրա զարգացումը:***

*Մշակութային կապիտալի մեկ այլ կարևոր հատկանիշ է, որ այն նպաստում է դրա կրողին իր առջև դնել հնարավորինս բարդ ու նոր նպատակներ ու նաև գտնել ուղիներ դրանց հասնելու ու դրված խնդիրները լուծելու համար: Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ սովորաբար աղքատ ու անապահով խավերի ծանր վիճակը պայմանավորված է նրանց մշակութային կապիտալի որակներով: Այդ մարդկանց հիմնական մասը, ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, նրանց հետ երկարատև հաղորդակցումը ու ուսումնասիրումը, չեն կարողնում իրենք իրենց առջև նպատակներ դնել ու գտնել այդ նպատակներին հասնելու ուղիներ: Առավել ևս այդ խավերը խիստ անկարողունակ են իրանց նպատակների ու խնդիրների լուծմանը տանող սոցիալական համագործակցության ու ինքնակազմակերպման ուղիների ձևավորման առումով:*

Եթե նույնիսկ Հայաստանում բնակվող աղքատների ու անապահովների մեջ հանդիպում են մասնագիտական որևէ ունակություն ունեցողները, միևնույն է նրանք չունեն դրա իրականացման ճանապարհին առաջացող խոչընդոտները հաղթահարելու համար անհրաժեշտ մշակութային կապիտալի բավականաչափ որակներ: Խոսքը վերաբերում է մասնավորապես այդ խոչընդոտների հաղթահարմանն ուղղված քայլերի նախաձեռնմանը, հասարակական ու քաղաքացիական նախաձեռնողականություններին, ինքնակազմակերպմանը կամ այլ ստրատեգիաների ու տակտիկաների մշակմանն ու կիրառմանը, որոնք թույլ կտան նրան դուրս գալ նման անելանելի թվացող վիճակից:

Աղքատների ու անապահովների խավերի կյանքը հիմնված է շատ պարզունակ տակտիկաների ու ստրատեգիաների կիրառման վրա, ինչը բնականաբար չի կարող նրանց թույլ տալ հաղթահարելու առկա պրոբլեմները: Նրանք հիմնականում ակնակալում են կամ հարազատների ու բարեկամների միջոցով իրենց հիմնախնդիրների լուծմանը՝ ասենք օրինակ վաստակի աղբյուր գտնելուն, կամ հույսները դնում են պետության վրա, որն իբր թե իրենց կապահովի աշխատանքով ու վաստակով: Թույլ են կամ բացակայում են մշակութային կապիտալի այն որակները, որոնք նպաստում են հասարակական ու քաղաքացիական այնպիսի ինքնակազմակերպչական միավորումների ստեղծմանը, որոնք կպաշտպանեն նրանց տարբեր տեսակի խոչընդոտներից, կօգնեն իրենց օգտին փոխելու հարկային ու տնտեսական օրենսդրությունը, կազդեն կրթական, առողջապահական, սոցիալական քաղաքականության ու ծրագրերի վրա: Հատկանշական է, օրինակ այն դեպքերում, երբ մարդկանց մշակութային կապիտալը թույլ է տալիս նրանց ինքնակազմակերպվել ու իրականացնել իրենց խնդիրների լուծմանն ուղղված կազմակերպված մարտավարություն, նրանք նաև հասնում են որոշակի խնդիրների լուծման: Այս առումով, բնութագրական է Կապան քաղաքում աշխատավարձերի կրճատումների ու վճարումների հետ կապված հանքարդյունաբերողների կազմակերպած ելույթները, որոնց պահանջները թե մարզային իշխանությունները և թե մասնավոր ձեռներեցները չկարողացան անտեսել և ի վերջո ստիպված եղան գնալ զիջումների ու աշխատավորների պահանջների կատարմանը:

Այս առումով, եթե մոտենանք խնդրին, ապա աղքատ ու անապահով խավերի մարդկային զարգացման հիմնական երաշխիքը նրանց մշակութային կապիտալի որակների զարգացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն է: Մասնավորապես կարևոր է աղքատների ու անապահովների երեխաների կրթական

պայմանների ու որակի բարելավումը: Դա շատ էական է սոցիալական որոշակի խավերին պատկանող.

- ընտանիքների համար աղքատությունը որպես վերարտադրվող երևույթ հաղթահարելու համար,
- երեխաների համար մարդկային զարգացման հավասար հնարավորություններ ձևավորելու համար:

Հակառակ դեպքում, աղքատությունը Հայաստանում ոչ միայն մի զգալի սոցիալական շերտում, այլ նաև ողջ հանրապետության համար կարող է դառնալ ինքնավերարտադրվող երևույթ: Սոցիալական նպաստների քաղաքականությունը որպես աղքատության հաղթահարման միջոց, արդյունավետ չի և այն որևէ կերպ չի օգնում տնային տնտեսությանը դուրս գալ աղքատության արատավոր ցիկլից: Այն Հայաստանում չունի մարդկանց մշակութային կապիտալի աճին և մարդկային զարգացմանը միտվածություն: Ուստի, չափազանց կարևոր է աղքատ ու անապահով ընտանիքներին ոչ միայն կենսաբանական գոյատևումը մի կերպ երաշխավորող սոցիալական նպաստների ծրագրերի իրականացումը, այլ այդ ընտանիքների զարգացման համար պայմանների բարելավմանը: Այս առումով չափազանց կարևոր են կրթական ծրագրերը ոչ միայն դպրոցահասակների, այլև՝ մեծահասակների միջավայրում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է քաղաքացիական մշակույթի զարգացմանն ուղղված կրթական ծրագրերին:

Պարզ է, որ մարդկանց մշակութային կապիտալի ձևավորման վրա առաջնային դերը խաղում է ընտանիքը: Քանի որ աղքատների ու սոցիալապես անապահովների ընտանիքները իրենց իսկ մշակութային կապիտալի ցածր որակների պատճառով ի վիճակի չեն դաստիարակության պրոցեսում երեխաներին որակյալ մշակութային կապիտալ փոխանցելու, ապա կարևոր է դառնում այդ երեխաների մշակութային կապիտալի որակների ձևավորմանը համայնքների մասնակցության բարձարցումը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է նախադպրոցական կրթության աստիճանում երեխաների դաստիարակության նոր մեթոդաբանության, ձեռնարկների ու ծրագրերի մշակմանը, որոնք կնպաստեն այդ երեխաների մոտ ոչ միայն մեխանիկական գիտելիքի պաշարների ձևավորմանը, այլ՝ ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Խոսքը վերաբերում է, մասնավորապես, սեփական ու ինքնուրույն եզրակացություններ անելու ունակություններին: Նույնը վերաբերում է տարրական, միջին ու ավագ դպրոցներին: Իհարկե սա շատ գլոբալ խնդիր է: Մակայն հարցն այն է, որ հետազոտության ընթացքում դպրոցներ ու նախակրթական հաստատություններ մեր այցելությունները, թույլ են տալիս եզրակացնելու, որ հատկապես մարզային բնակավայրերի երեխաների մարզկային զարգացումը չափազանց ցածր մակարդակի վրա է գտնվում և կարիք կա դրա վերաբերյալ *համալիր փաթեթի մշակման*:

### ***3. Աղքատ ու անապահով խավերի մարդկային զարգացման վրա ճգնաժամի առաջացրած հետևանքների ու հիմնախնդիրների հաղթահարման հնարավոր ուղիները***

#### ***3.1. Նվազագույն կենսապահովման համար անհրաժեշտ հակաճգնաժամային քաղաքականությունը առաջացած հիմնախնդիրների համատեքստում***

Բնակչության կենսապահովման կարիքների ապահովումը ինչպես արդեն նշել ենք վերլուծության ընթացքում մարդկային զարգացման հիմնարար պայմաններից է, քանի որ շնորհիվ դրա ապահովում է մարդու հնարավորությունների ու ազատությունների աճի հենքը: Դատելով այս մոտեցումից, սոցիալական քաղաքականությունը ուղղված պետք է լինի ոչ թե մարդու կենսաբանական գոյատևման նվազագույնի ապահովումը, այլև՝ որպես հասարակության անդամ նրա կյանքին լիարժեք մասնակցության հնարավորության ձևավորմանը: Այսինքն, սոցիալական պայմանների վատթարացումը չպետք է նվազեցի մարդու զարգացման հնարավորությունը, իսկ սոցիալական նպաստների քաղաքականությունը պետք է լուծի հենց այդ խնդիրը: Այս տեսանկյունից հարցին մոտենալու դեպքում հարկ է նկատել, որ աղքատ խավերի նկատմամբ ՀՀ-ում իրականացվող սոցիալական ծրագրերը չեն լուծում այդ խնդիրը: Դրանք հիմնականում թույլ են տալիս կանխել ծայրահեղ վիճակում հայտնված տնային տնտեսությունների մի որոշ հատվածի սովահարության ենթարկվելը: Մյուս կողմից, այդ քաղաքականությունը թույլ չի տալիս իրականում գրանցել ու սոցիալական նպաստառուների ցուցակներում ընդգրկել օժանդակության կարիք ունեցող աղքատների ու անապահով խավերին պատկանող տնտեսությունների մի զգալի մասը: Այսինքն, այս ոլորտում առկա է հիմնականում երկու խոշոր խնդիր.


- Նախ, սոցիալապես անապահովներին ցուցաբերվող քաղաքականության հասցեականության ապահովում ոչ միայն այն տեսանկյունից, որ ցուցակներում չմտցվեն իրականում ոչ աղքատ տնային տնտեսությունները, այլ հատկապես այն տեսանկյունից, որ դրանցում ընդգրկվեն իրականում կարիքավոր տնային այն տնտեսությունները, որոնք հաշվառման մեխանիզմների ու չափանիշների անկատարության հետևանքով դուրս են մնացել այդ ցուցակներից,
- Երկրորդ, հաշվի առնելով սոցիալական նպաստառուների ցուցակներից դուրս մնացած բազմաթիվ տնային տնտեսություններին, որոնք պաշտոնապես չեն դասվում նպաստառուի ցանկերում, սակայն չափանիշների հիմնական մասով ունեն սահմանագծային կարգավիճակ և գտնվում են աղքատության գծին մոտ, մշակել սոցիալական ծառայությունների մատուցման փաթեթ, որը թույլ կտա բավարարել նրանց մարդկային զարգացման նվազագույն պահանջները, կապված կրթական ու առողջապահական ծառայությունների մատչելիության ապահովման և հասարակությունից մեկուսացումը կանխելու հետ,

- երրորդ, սոցիալական նպաստի չափը հասցնել այնքանի, որն իրականում թույլ կտա գոնե լուծել սննդի ու կոմունալ կենցաղային նվազագույն կարիքները
- չորրորդ, սոցիալական նպաստներից բացի իրականացնել այնպիսի ծրագրեր, որոնք կնպաստեն այս տնային տնտեսությունների ինտեգրմանը հասարակություն և մարդկային զարգացման ապահովմանը,
- հինգերորդ, ռազմավարական առումով կարևոր է ներկայիս սոցիալական քաղաքականության համակարգից անցումը *ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի* և *սոցիալական աշխատողի* իրականում գործող ինստիտուտի ներդրումը: Սա թույլ կտա ներկայիս ծայրաստիճան բազմազան ու բազմաքանակ սոցիալական ծառայությունների համակարգից անցում կատարել մարդու սոցիալական կարիքները համալիր կերպով բավարարող ինտեգրված համակարգի: Բավական է միայն նկատել, որ ներկայումս կա 7 տիպի սոցիալական ծառայություններ իրականացնող պետական մարմիններ, որոնցում հաճախ ծառայությունները կրկնվում են: Իսկ ծառայությունների նման տրոհված ձևով մատուցումը տարբեր խնդիրներ ունեցող քաղաքացիներին դնում է ավելորդ բյուրկրատական քաշքշուկների ու ծառայությունից ծառայություն վազվոցի հիմնախնդրի առջև:
- Ինտեգրված սոցիալական համակարգին անցումը թույլ կտա ստեղծել ծառայությունների համադրված ու ինտեգրված պատկեր ա/ քաղաքացու կարիքների գնահատման, բ/ դրանց բավարարմանն ուղղված ծրագրերի և գ/իրականացման ընթացքի տեսանկյունից: Այս համակարգի իրական նորույթն այն է, որ ծառայության սուբյեկտը ոչ թե սոցիալապես անապահով խավն է, այլ կոնկրետ մարդը, իր սոցիալական կարիքների ողջ սպեկտրով և այդ կարիքների համալիր կերպով բավարարումը ուղղված է նրա մարդկային զարգացման հիմնահարցի լուծմանը:

### *3.2. Կրթական ոլորտի հակաճգնաժամային քաղաքականությունը առաջացած հիմնախնդիրների համատեքստում*

Ներկայացվող վերլուծության նպատակը չէ, հակաճգնաժամային ծրագրերի արդյունավետության գնահատումը: Սակայն, բացահայտված կարիքների լուծման համար անհրաժեշտ միջոցառումների նկարագիրը կարևոր է: Կրթության ոլորտում անհրաժեշտ միջոցառումներին վերաբերող առաջարկների առումով հետաքրքիր է դիտարկել փորձագիտական հարցման արդյունքները,

**Նկար 15** Ըստ Ձեզ որո՞նք են առավել հրատապ հիմնախնդիրները, որ վրիպել են մինչ այժմ իրականացվող կրթական ծրագրերից, բայց որոնց կարիքը աղքատ ու սոցիալապես անապահով խմբերն ամենից շատ ունեն



Ընդհանրապես փորձագիտական հարցման տվյալներին բավական համահունչ են նաև ֆոկլորս խմբային հրացումների արդյունքում բացահայտված պատկերին: Համաձայն որի վեր են հանվել հիմնախնդիրներին վերաբերող նման առաջարկներ: Այս առումով կրթության ոլորտի հիմնախնդիրները կարելի է դասակարգել մի քանի խմբի: Դրանցում առավել առաջնային ու հրատապ են աղքատ ու անապահով խմբերի համար կրթություն ստանալու տարրական պայմանների ապահովումը: Դրանցում առավել սուր խնդիրներն են.

- Դասագրքերի ապահովումը
- Գրենական պիտույքների ապահովումը
- Դպրոց հաճախելու համար անհրաժեշտ հագուստով ապահովումը
- Տարրական դասարաններում երեխաներին մեկանգամյա սնունդով ապահովումը:

Սրանք առաջնային այն հիմնախնդիրներն են, որոնք պետական որևէ ծրագրով չեն բավարարվում: Կան, առանձին բարեգործական կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ, որոշ բնակավայրերում էլ նույնիսկ մասնավոր բիզնեսի կողմից իրականացվող, որոնք լուծում են այս կամ այն հիմնախնդիրը մասնակիորեն: Ասենք, օրինակ, Ալավերդում, տեղի պղնձաձուլական

գործարանի նախաձեռնությամբ իրականացվող սոցիալական ծրագրի շրջանակներում տարրական դպրոցների երախաների համար կազմակերպվում էր օրական մեկանգամյա սնունդ, ինչը պետք է խոստովանել աղքատ ու անապահով տնտեսությունների վկայությամբ, շատ մեծ օժանդակություն էր համարվում: Փորձ է արվել նախապատրաստել նաև պետական ծրագրեր: Այս առումով, իհարկե, 2010 թվականին ընդունված «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրի գործարկումը կարող է մասնակիորեն լուծել վերը նշված հիմնախնդիրները: Սակայն, նախ, այդ ծրագիրը չի մտել իրագործման փուլ և չունի իրական արդյունքներ և, երկրորդ, այն թերի է և չի բավարարի առկա հիմնախնդիրներից երեխաների կրթություն ստանալու ամենաառաջնային պահանջների գոնե նվազագույնի լուծումը: Այդ պատճառով առաջարկվում է.

- դասագրքերի վարձավճարներին վերաբերող պետական ծրագրի փոխարեն մշակել ու մինչև 2015 թ. ներառյալ պետական բյուջեով ֆինանսավորել աղքատ ու անապահով երեխաների կրթություն ստանալու համար անհրաժեշտ սոցիալական փաթեթ, որը համալիր ձևով կլուծի դասագրքերի, գրենական պիտույքների, դպրոց հաճախելու համար անհրաժեշտ նվազագույն սեզոնային հագուստի և տարրական դասարանների երեխաների համար դպրոցական սնունդի կազմակերպումը:

Այսպիսով առաջին խումբ կարիքները և դրանց բավարարմանը վերաբերող առաջարկը վերաբերում է կրթության նվազագույն կարիքներին, ինչը ներառում է երեխայի ֆիզիկապես դպրոց հաճախելու և դասերը պատրաստելու համար դասանյութերի ու պարագաների անհրաժեշտ նվազագույնը:

Խնդիրների մյուս խումբը վերաբերում է մարդկային զարգացման շրջագծին: Մասնավորապես աղքատ ու անապահով երեխաների համար.

- հանրակրթական ոլորտում դա արտադասարանական պարապմունքների ու խմբակների կազմակերպման հիմնահարցն է, որը կծառայի երեխայի գեղագիտական, սպորտային, մտավոր, հոգևոր և այլ բնույթի ունակությունների բացահայտմանն ու զարգացմանը: Ասենք օրինակ, այն բնակավայրերի համար, որտեղ չկան հատուկ հաստատություններ, որոնք կարող են ապահովել նման արտադասարանական կրթություն, մշակվեն ու կիրառվեն *շրջիկ արտադասարանական պարապմունքների ծրագրեր*,
- ավագ դպրոցի մատչելիության բարձրացմանը ուղղված հատուկ փաթեթի ձևավորումը աղքատ ու անապահով խավերի համար, որտեղ հաշվի կառնվեն ավագ դպրոցների տարածական հասանելիության, դասագրքերի ու ուսման համար անհրաժեշտ մնացած բոլոր միջոցների ու պարագաների բավարարումը, դպրոց հաճախելու համար անհրաժեշտ հագուստի ձեռք բերումը և համակարգչային տեխնիկայից օգտվելու մատչելիության ապահովումը,
- Բուհական կրթություն ստանալու համար նախապատրաստական պարապմունքների հնարավորության ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրի մշակում և իրագործում: Ծրագրի մշակման ու իրագործման համար գնահատման հիմք ընդունել աղքատ ու անապահով խավերի երեխաների

համար մնացած խավերի հետ ԲՈՒՀ ընդունվելու մեկնարկային հավասար պայմանների ձևավորումը:

Կան նաև հանրակրթությանը վերաբերող ընդհանուր բնույթի հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են մարդկային զարգացմանը: Ընդհանուր բնույթի հիմնախնդիրներից առավել կարևորներից են կրթության ոլորտում մարզային ու այլ տիպի տարածքային անհամաչափության հաղթահարումը: Խնդիրն այն է, որ կրթության մարզային ու տարածքային անհամաչափ զարգացումը առաջին հերթին ազդում է հենց աղքատ ու անապահով երեխաների վրա, քանի որ ֆինանսական հնարավորությունների անբավարարությունը սահմանափակում է կրթական հաստատության առումով ընտրություն կատարելու հնարավորությունը և սովորաբար նման երեխաների կրթությունը կազմակերպում է կրթական որակի առումով ցածր կարգ ունեցող դպրոցներում: Այս առումով հանրապետական մակարդակով կարևոր խնդիր է անհամաչափությունների հաղթահարումը:

Ներկայացված, թե կրթական առաջնային կարիքների և թե զարգացման կարիքների բավարարմանն ուղղված առաջարկները հավասարապես շտապ արձագանքման կարիք ունեն: Չի կարելի բավարարվել միայն կրթական առաջնային բնույթի կարիքների հիմնահարցի լուծմամբ: Զարգացման կարիքների հիմնահարցերն աչքաթող անելով կամ հետաձգելով երկրորդ հերթի և դրանց զուգահեռաբար չիրագործումը կհանգեցնի այն բանին, որ բնակչության մի զգալի հատվածի, հատկապես, պատանի ու երիտասարդ տարիքային խմբերի մոտ կխաթարվեն մարդկային զարգացման գործընթացները, ինչը կունենա թե՛ անհատական և թե՛ հասարակական հետևանքներ: Իսկ եթե հաշվի առնենք, որ այդ խմբերի թիվը ճգնաժամի հետևանքում ըստ տարբեր գնահատականների աճել և կազմում է նվազագույնը բնակչության 35 %-ը, իսկ փորձագիտական անկախ գնահատականների համաձայն նույնիսկ ավելին, ապա հասկանալի է, որ խնդրի լուծումը ունի ոչ միայն մարտավարական, այլև՝ ռազմավարական կարևորություն:

### *3.3. Առողջապահական ոլորտի հակաճգնաժամային քաղաքականությունը առաջացած հիմնախնդիրների համատեքստում*

Կարելի է ասել, որ առողջապահական պրոբլեմների զգալի մասը բնորոշ է եղել նաև ճգնաժամին նախորդող շրջանին: Սակայն, այդ ճգնաժամի հետևանքում դրանք ավելի սուր են սկսել արտահայտվել այն առումով, որ.

- Նախ, կենցաղային պայմանների, սննդի վատթարացման հետևանքում, ավելի է սրվել աղքատ ու անապահով խավերի առողջական խնդիրները,
- Նույն խավերի առողջական վիճակի սրմանը նպաստել է նաև նրանց համար համար կանխարգելիչ բժկության փաստացի մատչելիության անբավարար աստիճանը.
- նույն խավերի առողջապահական ծառայություններից օգտվելու իրենց արտոնությունների, իրավունքների ու դրանց գործադրման մեխանիզմների մասին իրազեկվածության և կիրառելու կուլտուրայի չափազանց ցածր աստիճանի հետևանքում հաճախ ստանում են ոչ պատշաճ որակի առողջապահական ծառայություն կամ չեն ստանում ընդհանրապես



- առողջապահական համակարգում առկա վարչարարական ու կոռուպցիոն նկարագրված հիմնախնդիրների հետևանքում, ինչպես նաև որակյալ ծառայություն ստանալու փաստացի անվճարունակության հետևանքում խիստ նվազել է նրանց պատշաճ առողջապահական ծառայություն ստանալու հնարավորությունը,
- աղքատների ու անապահովների իրական թվի մեծացումը հանգեցրել է նրան, որ բնակչության բավական մեծ զանգված դուրս է մնացել սոցիալական նպաստների ցուցակներից և զրկվել գոնե ֆորմալ առումով անվճար բուժօգնություն ստանալու արտոնությունից: Փաստացիորեն, այս խավերը չտարբերվելով կամ շատ աննշան տարբերություններ ունենալով սոցիալական նպաստառու խավերից, հայտնվել են շատ ավելի ծանր վիճակում և առողջապահական կարիքները հոգալու հնարավորությունների առումով բնակչության առավել խոցելի խմբերից են,
- Ընդհանուր առմամբ ճգնաժամի հետևանքում բնակչության եկամուտների անկումը հանգեցրել է առողջապահական ծառայություններից օգտվելու ֆինանսական մատչելիության լայնածավալ դժվարությունների:

Առողջապահության ոլորտում նկատելի է նաև դրական փոփոխություններ, որոնք չնայած չունեն հատուկ հակաճգնաժամային ուղղվածություն, սակայն զգալիորեն նպաստում են հիմնախնդիրների մեղմանը: Խոսքը վերաբերում է մասնավորապես այնպիսի ծրագրերին, ինչպիսիք են.

- 2011թ. փետրվարի 1-ից հանրապետությունում ներդրված, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների փոխհատուցման համավճարային համակարգը, որը տարածվում է անհետաձգելի և գինեկոլոգիական բժշկական օգնության ծրագրերի վրա
- 0-7 տարեկան երեխաներին անվճար բուժօգնության ցուցաբերման ծրագիրը:

Կարևոր է եղել նաև մինչև մինչճգնաժամային շրջանում ներդրված որոշ ծրագրերի գործարկման շարունակականության ապահովումը նաև ճգնաժամի շրջանում: Մասնավորապես, դրական ազդեցություն ունեն.

- Անվճար ծննդօգնության ցուցաբերման ծրագիրը,
- Սոցիալապես անապահով խավերին անվճար բուժօգնության և դեղորայքի հատկացման ծրագիրը:

Ճիշտ է, հատկապես սոցիալական նպաստառուներին անվճար բուժօգնության ու համավճարային բուժօգնության ծրագրերի հետ կապված կան վարչարարական, կոռուպցիոն ու տեղեկատվական բնույթի այնպիսի խոչընդոտներ, որոնք էականորեն նվազեցնում են այդ ծրագրերի արդյունավետությունը: Լուրջ հիվանդությունների դեպքում մարդիկ հաճախ չեն վստահում անվճար ծառայության որակին և պատշաճ մակարդակի բուժօգնություն ստանալու համար իրականացնում են սովերային վճարումներ բուժող բժշկին: Այդ վճարումները չնայած լուրջ լարվածություն են առաջացնում անապահով ու աղքատ ընտանիքների համար, սակայն նրանք հաճախ ստիպված են լինում դիմել վճարովի բուժօգնության պարտքերի, բարեկամների օգնության կամ ընտանիքի ունեցվածքից որևէ բան վաճառելու ճանապարհով:

Չնայած, այս ամենին, նշված ընդհանուր բնույթի ծրագրերը ամեն դեպքում որոշակի դրական ազդեցություն ունեն առողջապահական ծառայությունների մակարդակը այնպիսին դարձնելու, որ անհրաժեշտության դեպքում գոնե նվազագույն բուժօգնություն մարդիկ ստանան: Այսինքն, եթե մարդը չունի որակյալ բուժօգնության համար ոչ անհրաժեշտ միջոցներ և ոչ էլ որևէ կերպ դա ձեռք բերելու հնարավորություն, նա կարող է ապավինել անվճար բուժօգնության ծրագրին:

Նշված դրական ու բացասական կողմերով հանդերձ, միանաշանակ կարելի է ասել, որ աղքատ ու սոցիալապես անապահով խավերի համար Հայաստանում որակյալ առողջապահական այնպիսի ծառայություն ստանալը, որը կնպաստի նրա մարդկային զարգացմանը առայժմ ապահովված չէ:

Այս առումով կարելի է ներկայացնել մի քանի հիմնական առաջարկներ, որոնց լուծումն անհրաժեշտ է ճգնաժամի հարուցած և առաջիկա տարիներին դեռևս խորանալու միտում ունեցող հիմնախնդիրները մեղմելու ու հաղթահարելու համար.

Կարճաժամկետ ծրագրեր, հրատապ խնդիրները լուծելու համար.

- Բնակչության միջավայրում լայնածավալ անվճար ախտորոշիչ ու կանխարգելիչ առողջապահական ծրագրերի պարբերական իրականացում, տարեկան նվազագույնը երկու անգամ: Ծրագրի շահառու համարել բոլոր նրանց, ովքեր ցանկություն կունենան այդ ծրագրերից օգտվելու, նախապես ապահովելով բնակչության իրազեկվածության բարձր մակարդակ,
- Մինչև ճգնաժամի հետևանքների լիակատար հաղթահարումը, մշակել ու իրականացնել սոցիալապես անապահով, բայց որևէ սոցիալական ծրագրի մեջ չներառվածների համար առողջապահական անվճար ծառայություններ ստանալու համակարգ: *Խոսքը վերաբերում է մասնավորապես, վերը նկարագրած անապահովների խավին,*
- համավճարային սկզբունքի տարածումը առողջապահության բոլոր ոլորտների վրա (ներկայումս այն վերաբերում է միայն գինեկոլոգիական ու անհետաձգելի բժշկական միջամտության կարիք ունեցող հիվանդություններին),
- առողջապահական որակյալ ծառայությունների ապահովման նպատակով մարզային բնակավայրերի բնակիչների համար առողջապահական որակյալ ծառայությունների մատուցման պարբերական ակցիաների իրականացում,
- ապահովել նշված ծրագրերի բյուջետային ֆինանսավորումը,
- բարձրացնել տարբեր տեսակի բարեգործական կամ հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը և առողջապահական ոլորտում նրանց կողմից իրականացվող ծրագրերի հետ պետական ծրագրերի սինխրոնիզացումը: Ձևավորել բնակչության անապահով խավերի առողջապահական կարիքների մասին տեղեկատվական տվյալներ և տարածել դրանք ոլորտում ծրագրեր իրականացնող բոլոր հնարավոր դերակատարներին:

Երկարաժամկետ առումով առողջապահական ոլորտում ճգնաժամի հնարավոր հետևանքները մեղմելու ու չեզոքացնելու համար.

- *Աղքատ ու անապահով խավերի տրամադրվող պետպատվերով կամ, բնակչության մեջ ընդունված արտահայտությամբ, անվճար առողջապահական ծառայության որակի բարձրացման մեխանիզմների կատարելագործում:*

Որակյալ առողջապահական ծառայություններ, ըստ մեր գրանցած հետազոտական տվյալների, հնարավոր է միայն ծառայության համար փաստացի դրամական վճարումներ կատարելու ճանապարհով: Քանի որ մեր հետազոտության խնդիրը չի եղել նման իրավիճակի ձևավորմանը նպաստող վարչական ու կոռուպցիոն մեխանիզմների բացահայտումը, այստեղ կբավարարվենք նշելով միայն, որ վերը նշված առողջապահական ծրագրերը նպատակադրումների ու խնդիրների առումով չնայած դրական նկարագիր ունեն, սակայն կարիք ունեն իրականացման մեխանիզմների կատարելագործման, որպեսզի ծրագրով նախատեսված նպատակները իրոք իրականացվեն և ապահովեն աղքատ ու անապահով խավերի համար նրանց մարդկային զարգացման հեռանկարները երաշխավորող առողջապահական ծառայությունների ստանալը.

- Ընդհանրապես ախտորոշիչ ու կանխարգելիչ առողջապահության զարգացումը և բնակչության մեջ այդ ծառայություններից օգտվելու մշակույթի բարձրացում,
- Մարզային ու տարածքային անհամաչափ զարգացվածության հաղթահարմանն ուղղված առողջապահական ծրագրերի մշակում և իրագործում,
- մշակել և իրականացնել մասնավոր ձեռներեցությանը պետականորեն նախատեսված սոցիալական ուղղվածության առողջապահական ծրագրերի իրականացման ոլորտ ներգրավման քաղաքականություն: Մասնավորապես, զարգացնել առողջապահության ոլորտ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (Corporate Social Responsibility) ինստիտուտի ներդրման համար նպաստավոր ու խրախուսիչ օրենսդրական միջավայրը,
- բնակչության իրազեկվածության ու առողջապահական ծառայություններից օգտվելու մշակույթի բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում:

Ինչ վերաբերում է ըստ փորձագիտական կարծիքների ներկայացված առաջարկների առաջնահերթության խնդրին, ապա պատկերն այսպիսին է.

**Նկար 16.** *Ըստ Ձեզ որո՞նք են առավել հրատապ հիմնախնդիրները, որ վրիպել են մինչ այժմ իրականացվող առողջապահական ծրագրերից, բայց որոնց կարիքը աղքատ ու սոցիալապես անապահով խմբերը ամենից շատ ունեն*



Ամփոփելով ներկայացվող վերլուծությունը, կցանկանայինք նշել, որ համաշխարհային ֆինանսատնտեսական չգնաժամը էականորեն է ազդել Հայաստանում մարդկային զարգացման վրա և այդ ազդեցությունը խիստ նկատելի է աղքատ ու անապահով խավերի վրա: Ստեղծված իրավիճակում համալիր մոտեցման անհրաժեշտություն է առաջացել, որը կներառի ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ծրագրեր: Կարճաժամկետ ծրագրերն ուղղված պետք է լինեն հաղթահարելու այնպիսի խնդիրները, որոնք շտապ ու կանխարգելիչ լուծումներ են պահանջում և կշարունակվեն այնքան ժամանակ մինչև կմշակվեն ու կներդրվեն այնպիսի երկարաժամկետ ծրագրեր, որոնք կունենան գոյություն ունեցող հիմնախնդիրների համար ինչպես կանխարգելիչ, այնպես էլ հեռանկարային առումով հիմնախնդիրները արմատականորեն լուծելու հատկանիշներ:

*Օգտագործված գրականության ու գրավոր աղբյուրների ցանկը.*

1. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Երևան, 2003
2. ՀՀ Կայուն զարգացման ծրագիր, Երևան, 2007
3. Կայուն զարգացման կարճաժամկետ քաղաքականությունների ծրագիր, 2010-2012, Երևան, 2010
4. ՀՀ Ազգային Վիճակագրական տարեգիրք, 2010
5. Հայաստանի տնտեսական զեկույց, 2009
6. Հայաստան 2009, խոստում և իրականություն, Երևան, 2009
7. Հայաստանի մակրոտնտեսական ու հարկաբյուջետային շրջանակը 2010-2013 թթ., Երևան, 2010
8. Amartya Sen, Health: Perception Versus Observation: Self Reported Morbidity Has Severe Limitations And Can Be Extremely Misleading, Source: BMJ: British Medical Journal, Vol. 324, No. 7342 (Apr. 13, 2002), pp. 860-861
9. Amartya Sen, Development: Which Way Now?, Source: The Economic Journal, Vol. 93, No. 372 (Dec., 1983), pp. 745-762
10. Amartya Sen, A Sociological Approach to the Measurement of Poverty: A Reply to Professor Peter Townsend, Source: Oxford Economic Papers, New Series, Vol. 37, No. 4 (Dec., 1985), pp. 669-676
11. Armenia, National Human Development Report, 2009, UNDP
12. Armenia MDG National Progress Report, 2010, UNDP
13. Armenia at a Glance, 2009, WB, [http://devdata.worldbank.org/AAG/arm\\_aag.pdf](http://devdata.worldbank.org/AAG/arm_aag.pdf)
14. Armenia. The 2008–09 Global Economic Crisis, Policy, Responses, and Household Coping Strategies 2010, WB
15. First Development Policy Operation, DPO-1, 2009
16. Health in Times of Transition: an International Research Project, HITT-CIS Bulletin, # 1, 2010
17. Human Development Report, 2010, UNDP
18. World Development Report, 2010, WB
19. Цели развития тысячелетия и политика преодоления бедности в Армении, Ереван, 2010

**Փորձագիտական հարցման հարցարան**

Հարգելի գործընկեր, սույն հետազոտությունը նվիրված է սոցիալապես անապահով խավերի մարդկային զարգացման վրա համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը գնահատելուն և այդ ոլորտում իրականացվող քաղաքականության թիրախավորմանը նպաստող առաջարկների վերհանմանը: Ձեր մասնակցությամբ և ստորև ներկայացված հարցերին պատասխանելով Դուք մեծապես կնպաստեք հետազոտական այդ խնդրի լուծմանը: Կանխավ շնորհակալություն աջակցության համար:

**1. Ձեր կարծիքով արդյո՞ք համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ազդեցություն է ունեցել սոցիալապես անապահով խավերի կյանքի վրա (շրջանակի մեջ առեր. խնդրեմ, Ձեր կարծիքին համապատասխանող տարբերակի համարը):**

- 1. այո, շատ սուր
  - 2. այո, մասնակիորեն
  - 3. ոչ (անցնել 3-րդ հարցին)
  - 4. դժվարանում եմ պատասխանել (անցնել 3-րդ հարցին)
- այլ .....

**2. Հատկապես, ո՞ր կարիքների բավարարման վրա է այն առավել սուր կերպով անդրադարձել (կարող եք ընտրել մինչև 3 պատասխան)**

- 1. սնունդի
  - 2. հագուստի
  - 3. բնակարանի ջեռուցման
  - 4. կոմունալ և կենցաղային կարիքների
  - 5. առողջապահական կարիքների
  - 6. երեխաների կրթության
  - 7. տեղեկատվություն ստանալու
  - 8. ժամանացի ու հանգստի
  - 9. դժվարանում եմ պատասխանել
- այլ .....

**3. Ազդել է արդյո՞ք ճգնաժամը սոցիալապես անապահով երեխաների կրթության վրա**

- 1. այո, զգալիորեն
- 2. այո, բայց ոչ զգալիորեն
- 3. ոչ (անցնել 5-րդ հարցին)
- 4. դժվարանում եմ պատասխանել (անցնել 5-րդ հարցին)

**4. Եթե այո, ապա ինչպե՞ս (կարող եք ընտրել մի քանի պատասխան)**

- 1. նվազել է հաճախումների ծավալը
  - 2. ընկել է ուսման առաջադիմությունը
  - 3. ընկել է ուսման հանդեպ հետաքրքրվածությունը
  - 4. բացասաբար է ազդել երեխաների ֆիզիկական ու հոգեկան վիճակի վրա
  - 5. դժվարանում եմ պատասխանել
- այլ .....

**5. Ըստ Ձեզ, որո՞նք են այն հիմնական պրոբլեմները, որոնք առաջացել են սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կրթության ոլորտում (կարող եք ընտրել մի քանի պատասխան):**

1. դասագրքերի ձեռք բերելը
  2. գրենական պիտույքներ ձեռք բերելը
  3. դպրոց հաճախելուն անհրաժեշտ հագուստ ձեռք բերելը
  4. արտադասարանական պարապմունքների ու խմբակներ հաճախելը
  5. դժվարանում եմ պատասխանել
- այլ .....

**6. Տեղյակ եք արդյո՞ք, հետձգնաժամային շրջանում իրականացվել են սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կրթական կարիքների մեղմանն ուղղված ծրագրեր**

1. այո
2. ոչ (անցնել 10-րդ հարցին)
3. դժվարանում եմ պատասխանել (անցնել 10-րդ հարցին)

**7. Ինչպես ե՞ք գնահատում այդ ծրագրերը**

1. շատ արդյունավետ
2. օգտակար, բայց ոչ հիմնարար
3. անարդյունավետ
4. դժվարանում եմ պատասխանել

**8. Եթե տեղյակ եք, ապա ո՞ր հիմնախնդիրների լուծմանն են ուղղված եղել այդ ծրագրերը (կարող եք ընտրել մի քանի պատասխան)**

1. երեխաների սնունդի կարիքների բավարարմանը
  2. երեխաների հագուստի կարիքների բավարարմանը
  3. երեխաների դասագրքերի ու գրենական պիտույքների կարիքների բավարարմանը
  4. երեխաների սոցիալ-հոգեբանական կարիքների բավարարմանը
  5. երեխաների գեղագիտական, մարզական և այլ ունակությունների զարգացման նպատակով արտադասարանական խմբակներ հաճախելու կարիքների բավարարմանը
- այլ .....

**9. Ինչպե՞ս կգնահատեք այդ ծրագրերի մասին շահառուների տեղեկացվածության աստիճանը**

1. բարձր
2. բավարար
3. անբավարար

**10. Ըստ Ձեզ, որո՞նք են այն հիմնական եկամտի աղբյուրները, որոնց հաշվին անապահով ընտանիքները հոգում են երեխաների կրթական կարիքները (կարող եք նշել 3 ամենակարևորները)**

1. աշխատավարձ

2. սոցիալական նպաստներ
3. պետական հատուկ ծրագրեր
4. արտերկրից հարազատների կամ ծանոթների օժանդակություն
5. ընտանիքի առաջնային կարիքներին ուղղված ծախսերի կրճատման հաշվին
6. պարտքերի միջոցով
7. բարեկամների, ծանոթների և այլ անձնական կարգի օգնություն
8. բարեգործական կազմակերպությունների օգնություն
9. հասարակական կազմակերպությունների ծրագրերի օժանդակություն
10. մասնավոր ձեռներեցների օգնություն
11. դժվարանում եմ պատասխանել
- այլ .....

**11. Ինչպե՞ս կգնահատեք սոցիալապես անապահովների կրթական կարիքների նկատմամբ պետական ներկայիս քաղաքականությունը**

1. լիովին լուծում է առաջացած հիմնախնդիրները
2. հիմնականում է լուծում առաջացած հիմնախնդիրները
3. լուծում է առաջացած հիմնախնդիրները, բայց շատ մասնակիորեն
4. ընդհանրապես որևէ կերպ չի նպաստում որևէ կարիքի բավարարմանը
5. դժվարանում եմ պատասխանել

**12. Ձեր կարծիքով ազդում են արդյո՞ք առաջացած կրթական հիմնախնդիրները երեխայի մարդկային զարգացման ու ապագայի վրա**

1. այո, շատ էականորեն
2. այո, մասնակիորեն
3. ոչ
4. դժվարանում եմ պատասխանել

**13. Ըստ Ձեզ որո՞նք են առավել հրատապ հիմնախնդիրները, որ վրիպել են մինչ այժմ իրականացվող կրթական ծրագրերից, բայց որոնց կարիքը աղքատ ու սոցիալապես անապահով խմբերն ամենից շատ ունեն**

.....  
 .....  
 .....

**14. Նկատվում է արդյո՞ք ճգնաժամի պատճառով առողջապահական ծառայությունների մատչելիության աստիճանի անկում**

1. այո, զգալիորեն
2. այո, բայց ոչ զգալիորեն
3. ոչ (անցնել 17-րդ հարցին)
4. դժվարանում եմ պատասխանել (անցնել 17-րդ հարցին)

**15. Եթե այո, ապա ինչպես**

1. խուսափում են առողջապահական հիմնարկություններին դիմել
2. դիմում են ծայրահեղ վիճակներում
3. դիմում են ախտորոշման, բայց խուսափում են բուժումից
4. դժվարանում եմ պատասխանել



այլ .....

**16. Ի՞նչն է մատչելիության անկման պատճառը (կարող եք նշել մինչև 3 պատասխան)**

1. ֆինանսական գործոնը,
2. տեղեկատվական գործոնը
3. վարչարարական գործոնը
4. հասարակական-մշակութային գործոնը (ազգային կարծրատիպեր, սովորույթներ, ավանդույթներ)
5. դժվարանում եմ պատասխանել

այլ .....

**17. Ձեր կարծիքով հատկապես ո՞ր բնույթի առողջապահական հիմնախնդիրներն են սրվել սոցիալապես անապահովների համար (կարող եք նշել մինչև 3 պատասխան)**

1. առաջնային առողջապահական
2. ախտորոշման
3. հիվանդանոցային և ստացիոնար բուժման
4. դեղորայքի ձեռք բերման
5. դժվարանում եմ պատասխանել

այլ .....

**18. Տեղյակ եք արդյո՞ք, իրականացվել են սոցիալապես անապահով խավերի կարիքների մեղմանն ուղղված առողջապահական ծրագրեր**

1. այո
2. ոչ (անցնել 22-րդ հարցին)
3. դժվարանում եմ պատասխանել (անցնել 22-րդ հարցին)

**19. Ինչպես ե՞ք գնահատում այդ ծրագրերը**

1. շատ արդյունավետ
2. օգտակար, բայց ոչ հիմնարար
3. անարդյունավետ (անցնել 21-րդ հարցին)
4. դժվարանում եմ պատասխանել (անցնել 21-րդ հարցին)

**20. Ձեր կարծիքով, հատկապես, ո՞ր ոլորտում է այդ ծրագրերի արդյունավետությունը բարձր**

1. առաջնային առողջապահության
2. հիվանդանոցային կամ ստացիոնար բուժման ոլորտի

այլ .....

3. դժվարանում եմ պատասխանել

**21. Ինչպե՞ս կգնահատեք այդ այդ ծրագրերի մասին շահառուների տեղեկացվածության աստիճանն:**

1. բարձր
2. բավարար
3. անբավարար
4. դժվարանում եմ պատասխանել

**22. Ըստ Ձեզ, որո՞նք են այն հիմնական աղբյուրները, որոնց հաշվին անապահով ընտանիքները հոգում են առողջապահական կարիքները (կարող եք նշել 3 ամենակարևորները)**

1. աշխատավարձ
2. սոցիալական նպաստներ
3. պետական հատուկ ծրագրեր
4. արտերկրից հարազատների կամ ծանոթների օժանդակություն
5. ընտանիքի առաջնային կարիքներին ուղղված ծախսերի կրճատման հաշվին
6. բարեկամների, ծանոթների և այլ անձնական կարգի օգնություն
7. բարեգործական կազմակերպությունների օգնություն
8. պարտքերի միջոցով
9. հասարակական կազմակերպությունների օժանդակություն
10. մասնավոր ձեռներեցների օգնություն
- այլ .....
11. դժվարանում եմ պատասխանել

**23. Ինչպե՞ս կգնահատեք սոցիալապես անապահովների առողջապահական կարիքների նկատմամբ պետական ներկայիս քաղաքականությունը**

1. լիովին լուծում է առաջացած հիմնախնդիրները
2. հիմնականում է լուծում առաջացած հիմնախնդիրները
3. լուծում է առաջացած հիմնախնդիրները, բայց շատ մասնակիորեն
4. ընդհանրապես որևէ կերպ չի նպաստում որևէ խնդրի լուծմանը
5. դժվարանում եմ պատասխանել

**24. Ձեր կարծիքով ազդում են արդյո՞ք առաջացած առողջապահական հիմնախնդիրները մարդու կյանքի որակի և տևողության վրա**

1. այո
2. ոչ
3. դժվարանում եմ պատասխանել

**25. Ըստ Ձեզ որո՞նք են առավել հրատապ հիմնախնդիրները, որ վրիպել են մինչ այժմ իրականացվող առողջապահական ծրագրերից, բայց որոնց կարիքը աղքատ ու սոցիալապես անապահով խմբերը ամենից շատ ունեն**

.....  
.....  
.....

**26. Ձեր կարծիքով, իրականացվող առողջապահական ծրագրերը նշված խնդիրներից որոնց լուծմանն է նպաստում (կարող եք նշել 3 ամենակարևորները)**

1. իրավիճակային խնդիրներ
2. կարճաժամկետ խնդիրներ
3. երկարաժամկետ խնդիրներ
4. ռազմավարական խնդիրներ
5. որևէ խնդիր չեն լուծում
6. դժվարանում եմ պատասխանել

**27. Ձեր կարծիքով, նշված խնդիրներից ո՞րն առավելապես բարեփոխման կարիք ունի (կարող էր նշել 3 ամենակարևորները)**

1. ֆինանսավորման հասցեականության բարձրացման
  2. ֆինանսավորման չափերի մեծացման
  3. վարչարակալական մեխանիզմների կատարելագործման
  4. կոռուպցիոն ռիսկերի ցածրացման
  5. համակարգի ընձեռած հնարավորություններից շահառու խմբերի իրազեկվածության աստիճանի բարձրացման
  6. ծառայություններից օգտվելու շահառուների կուլտուրայի բարձրացման
  7. դժվարանում եմ պատասխանել
- այլ .....

**28. Ձեր կարծիքով նախաձեռնված հակաճգնաժամային ծրագրերը ի՞նչ չափով են համապատասխանում Կայուն Զարգացման Ծրագրի ԿԶԾ/ԱՀՌԾ 2-ի իրագործմանը**

1. լիովին
2. մասամբ
3. չեն համապատասխանում ընդհանրապես
4. դժվարանում եմ պատասխանել

**29. Ձեր կարծիքով նախաձեռնված հակաճգնաժամային ծրագրերը նպաստու՞մ են ԿԶԾ ոլորտային ծրագրերով նպատակադրումների իրագործմանը**

1. այո, լիովին
2. այո, մասնակիորեն
3. ընդհանրապես չեն նպաստում
4. դժվարանում եմ պատասխանել

**30. Ձեր կարծիքով կա արդյո՞ք ԿԶԾ վերանայման անհրաժեշտություն**

1. այո
2. ոչ
3. դժվարանում եմ պատասխանել

**31. Ձեր կարծիքով ինչպիսի՞ փոփոխությունների է անհրաժեշտ ենթարկել ԿԶԾ-ն**

1. վերանայել հիմնովին
  2. վերանայել ռազմավարական գերակայություններն ու թիրախները
  3. վերանայել ոլորտային քաղաքականությունները մասնակիորեն
  4. վերանայել ոլորտային քաղաքականությունները հիմնովին
  5. դժվարանում եմ պատասխանել
- այլ.....

**32. Ձեր սեռը**

1. կին
2. տղամարդ

**33. Տարիքը**

1. 20-35,
2. 36-50,
3. 51-65,
4. 65-ից բարձր

**34. Զբաղվածության ոլորտը**

1. հանրակրթական և բուհական հաստատություններ
  2. առողջապահական ծառայություններ ու հաստատություններ
  3. պետական և տարածքային կառավարում
  4. տեղական ինքնակառավարում
  5. հասարակական կազմակերպություն
  6. անկախ փորձագետ
- այլ .....

**Տոկուս խմբային հարցարան**

1. Ինչպե՞ս կգնահատեք համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը սոցիալապես անապահով խմբերի կյանքի վրա և հատկապես որ խնդիրներն են ըստ Ձեզ սրվել:
2. Ազդել է արդյոք ֆինանսատնտեսական ճգնաժամը կրթական ու առողջապահական ծառայությունների մատչելիության վրա և եթե այո, ապա ինչու՞մ է արտահայտվում այդ ազդեցությունը,
3. Որո՞նք են կրթական/առողջապահական ոլորտների առաջնային կարիքները, որոնց լուծման հարցում հանդիպում եք պրոբլեմների,
4. Որո՞նք են այն գլխավոր հիմնախնդիրները, որոնց բախվում եք կրթության ու առողջապահության ոլորտներում,
5. Ի՞նչ բնույթի են այդ հիմնախնդիրները. **ա/** Ֆինանսական, **բ/** տեղեկատվական, **գ/**վարչարարական, **դ/** սոցիալ-մշակութային և այլն,
6. Ինչպե՞ս եք կարողանում լուծել գոյություն ունեցող հիմնախնդիրները և դրանց որ մասն է հիմնականում մնում անլուծելի,
7. Որքանով եք տեղյակ Ձեր կարիքներին ուղղված պետական ծրագրերի մասին և ինչպե՞ս ու ի՞նչ աղբյուրներից եք տեղեկություն ստանում,
8. Ինչպիսի՞ն է առկա ծրագրերի արդյունավետության գնահատականները, ի՞նչ դրական ու թերի կողմեր կարելի է մատնանշել այդ ծրագրերում և որքանո՞վ են դրանք համապատասխանում Ձեր կրթական/առողջապահական իրական ու առաջնահերթ կարիքների բավարարմանը,
9. Ի՞նչ առաջարկներ կարելի է ներկայացնել կրթական/առողջապահական ոլորտներում առկա հիմնախնդիրները հաղթահարելու և առաջնայնորեն ո՞ր կարիքներին ուղղված ծրագրերի պահանջն է հրատապ:
10. Ինչպիսի՞ն է քաղաքացիական հասարակության դերակատարությունը սոցիալապես անապահովների մարդկային զարգացման հիմնախնդիրների մեղման հարցում:
11. Ձեր կարծիքով ազդում է արդյո՞ք ժողովրդավարության արդի վիճակը սոցիալապես անապահովների կարիքների նկատմամբ առկա վերաբերմունքի վրա:
12. Ըստ Ձեզ ինչպիսի՞ ժողովրդավարական բարեփոխումները կնպաստեն սոցիալապես անապահովների մարդկային զարգացման հիմնախնդիրների լուծմանը: